

ՄԱՌԶԻԿ

مارزیک



مجلة رياضية شهرية
تصدرها جمعية الهومنتمن بيروت

marzig

SPORTS MAGAZINE

հ.հ. ՏԱՐԻ, 2005, ԹԻԻ 3 (278) VOL. XXIV N°8

السنة الرابعة والعشرون العدد الثامن



ՀԱՒԱՏԱՐՄՈՒԹԻՒՆ

**Հ.Մ.Ը.Մ.Ի
ԹԱՆԳԱՐԱՆԷՆ**



Հ.Մ.Ը.Մ.Ի թանգարանին մէջ իրենց կարելոր տեղը ունին Ռուսմանիոյ շրջանին վերաբերող հրատարակութիւնները:

Հ.Մ.Ը.Մ.Ի Ռուսմանիոյ մէջ գործունէութիւն ծառայած է 1922էն մինչեւ Բ. Աշխարհամարտի առաջին տարիները: Գործած են 7 մասնաճիւղեր (Պուքրէշ, Գոնաքանցա, Սիլիսթրէ, Պապարճը, Սթրունկա, Կեռլա, Քիշնէւ), որոնք ունեցած են բաւական բեղուն գործունէութիւն: Այդ օրերէն մեկի հասած են, ի շարս այլ հրատարակութիւններու, սկառուտական երկու գիրքեր, որոնց հրատարակութեան թուականները 1925 եւ 1926 են:

Առաջին գիրքը՝ «Ուղեցոյց - Արի» պատրաստուած է Նորընծաներու համար: 64 էջերով (12 x 16 սմ.) ան նախ կը ներկայացնէ Պէյտրն Փաուրլի գրութիւններէն՝ «Սկառուտութիւնը ի՞նչպէս հիմնուեցաւ», «Սկառուտութեան ոգին», «Սկառուտութեան մեթոտը»: Ապա, գիտելիքներ կը փոխանցէ Նորընծայ սկառուտներու համար:

Երկրորդ գիրքը, «Ուղեցոյց Արի Բ. հատոր», 96 էջերով (12 x 16 սմ.) կը ներկայացնէ սկառուտական Բ. կարգի գիտելիքներ, 10 ընդհանուր բաժիններով: Խոհանոց, Արեւելում, Շինարարութիւն, Հետախուզութիւն, Նախնական դարմանումներ, Գիւմի խաղը, Սկառուտական գնացք, Նշաններ, Պայմանադրական այրութեն եւ Լրացուցիչ ծանօթութիւններ:

«ՄԱՐԶԻԿ» ԻՆ ԿԸ ՆՈՒԻՐԵՆ

- Եղբ. Ծորճ Տաբէտեան (Յորդանան) \$300
- Եղբ. Յովհաննէս Աւագեան (Քուէլթ) \$10
- Մարալ Գասարճեան (Գանատա) Գ. \$40

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

ԴՐՕՇՆ ՅԱՂԹԱԿԱՆ

Սիրելի «Մարզիկ»,
Յունիս 2005ի թիւէն ուրախութեամբ տեղեկացանք հայութեան համար բերրի՝ Յունաստանի հողին վրայ կայացած Համա-Հ.Մ.Ը.Մ.Իական խաղերուն մասին, որոնք ոչ միայն նոր թեւ ու թռիչք կու տան մեր ժողովուրդի հոգեմարմնական վերաշխուժացման եւ երիտասարդութիւնը Աստուծոյ ու Հայրենիքի պահպերելոյ նպատակաւացութեան, այլեւ՝ կ'ամրացնեն դարաւոր կապերը սրտակից մեր երկու երկիրներուն, հարթելով պատմութեան ճամբան դէպի ապագան:



Հ.Մ.Ը.Մ.Ի Տէր Զօրի սկառուտներ Կեդրոնական Վարչութեան անդամներու եւ այլ հիւրերու հետ:

Այդ մարզախաղերը եթէ արտաքին փայլ են եւ սպառնալից հպարտութեան ներշնչարան, անոնց պուզահեռ կայացած վարչական խորհրդածողովները ներքին կոանում են, մեկնակէտ ու խարխիւ՝ անյապաղ իրագործելի ծրագիրներու, ի խնդիր միութեան պօրացման եւ հայութեան հետապնդած Դատին եւ իրաւունքներուն ձեռքբերման:

Այս գետնի վրայ, ի՛նչ խօսք, որ բարձրակէտ մը կը կապմէ Տէր Զօրի մէջ Հ.Մ.Ը.Մ.Ի մասնաճիւղ մը յառաջացնելու հոգեպարար որոշումը: Երեւակայել որ 1915ի Յեղասպանութենէն վերապրող իլեակներու շատաւիղներ քով-քովի գան, գիշերը բոցավառող խարոյկին շուրջ, Եռագոյնի հովանիին տակ կապմեն «հրաթեւ տորմիդ»: Երեւակայել որ Տէր Զօրի պալատներուն փողերախումբը «Յառաջ նահատակ»ը թնդացնելով՝ կարմիր աւալներուն վրայէն յաղթարշաւ քայլ դէպի Հայրենիք ու Յաւերժ:

Յայնժամ՝ «Ոտքի Մեռելներ», մօտ դարէ մը ի վեր անապատին մէջ թափառող հայու ուրուականներ պիտի վերաշնչաւորուին, աւալին տակ մնացած կմախքներ միս պիտի կապեն՝ վերպէտաւորուին, կենդանանան ու տարիներու հետ «կամաւոր բանակ» մը կապմած պիտի քայլեն անվտանգ դէպի մարդկութեան խիղճը, պահանջելով գործադրել արդարահատուցում:

Աշխարհի որեւէ մէկ անկիւնը, մեծ ու պզտիկ ոստաններու մէջ կարելի է ծնունդ տայ Հ.Մ.Ը.Մ.Ի մասնաճիւղի մը, այսինքն կանգնել հայապահպանման, հայրենիքի գոյատեւման միջնաբերդին սին մը, անկիւնաքար մը: Բայց Տէր Զօրի աւալներուն վրայ Հ.Մ.Ը.Մ. մը ոտքի հանել՝ այդ միջնաբերդի աշտարակէն այ բարձր է, եւ անոր զագաթին ծածանող դրօշն է յաղթական:

Շնորհաւորելի է Հ.Մ.Ը.Մ.Ի իր այս խիզախ՝ «համահայկական» որոշումին համար, Նահատակները թող ժպտին քիչ մը:

Յ. ԳԵՂԱՊԿ

ՄԱՀԱԶԳ

Հ.Մ.Ը.Մ.Ի Կեդրոնական Վարչութիւնը խոր ցաւով կը գուժէ իր անխկին անդամներէն, Հարաւային Ամերիկայի շրջանէն՝

ԵՂԲ. ԾՈՐԾ ՏԱՂԼԵԱՆԻ

մահը, որ պատահեցաւ Երկուշաբթի, 19 Սեպտեմբեր 2005ին, Արժանթինի մէջ:



Թիւիւն նիւթերը

MARZIG SPORTS MAGAZIN EDITED MONTHLY BY HOMENETMEN
 مارزیک مجله ریاضية شهریه تصدیرها جمعیه المومتمن الریاضی



Մարզական ամսաթերթ
 Հրատարակություն՝ Հ.Մ.Ը.Մ.ի
 ԿԵԳՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ
 ԻԴ. ՏԱՐԻ, 2005, ԹԻԻ 8 (278)

ԽՄԲԱԳԻՐ
 Կիզն Աւագան
 ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԱՆԳԱՄ
 Սեդա Պէշեան
 «ՄԱՐԶԻԿ»Ի ՅԱՆՉՆԱՍՈՒՄԲ
 Արօ Մոսիկեան
 Իշխան Եղիայեան
 Գօգօ Մկրտիչեան

ԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ ՈՒՆԻՒՆ
 Հրայ Տէր Սարգիսեան, Տոքթ. Միսաք
 Արզումանեան, Պետրոս Շենմեկեան,
 Ալին Չէթունյեան, Ս. Ա.,
 Սպարի Լատոյեան
 և շրջաններու թղթակիցներ:

Էջադրում - Չարեհ Չէօրէքճեան
 Գրաշարութիւն - Վերա Բարսեղեան
 Colour Separation - Photogravure Paklayan
 Կողբի Ձեւաւորում Տպագրութիւն



ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ՀԱՍՅԷ
 Պուրճ Հանուտ, Ճինիշեանի Թաղ
 Թիւ 65 Շէնք, Գ. Յարկ
 Հեռ: 01/248043, Fax: 01/260117
 E-mail: marzig@homenetmen.org
 P.O. Box: 80486 B. Hammoud, Lebanon

ՅՐԻՈՒՄ


Լիբանանի մէջ թերթին
 հատաւաճառի սակն է 3000 լ.ն.:
 Տարեկան բաժանորդագրութեան
 սակ ճշդուած է 35000 լ.ն.:
 Լիբանանէն դուրս թերթին
 բաժանորդագրութիւնը
 կը կատարեն Հ.Մ.Ը.Մ.ի Մեկուսի
 և Շրջանային Վարչութիւնները:
 Թերթը ուղղակի Լիբանանէն
 կը ստացուի անձնական
 բաժանորդագրութեանը
 (Տարեկան սակ՝ Միջին Արեւելեան
 և Եւրոպական երկիրներ \$50,
 Ամերիկա և Աւստրալիա՝ \$55):

Հ.Մ.Ը.Մ.ԱԿԱՆ ԿԵԱՆՔ

- Խմբագրական 2
- 90ամեակ 3
- Վարչագիտական 12
- Յուշեր 14
- Դաստիարակչական 16
- Մասնաճիւղի Մասնաճիւղ 22



23



3

ԲԱԺԻՆՆԵՐ

- Մարզական Գիտութիւն 18
- Առողջ Միջավայր 20
- Մանկապատանեկան 38
- Տարբեր Հայեացքով 40



25



Խոնարհական

ՆԱՄՏ

ՀԱՒԱՏԱՐՄՈՒԹԻՒՆ

Ն.Մ.Ը.Մ.ականի բնորոշ յատկություն է հաւատարմութիւնը: Շատերու համար Հ.Մ.Ը.Մ.ականութիւնը հոմանի՛շ է հաւատարմութեան: Որքան մարդ հեռանայ Հ.Մ.Ը.Մ.ականութենէ՛, այնքան կը հեռանայ հաւատարմութենէ: Նաեւ՝ հակառակը: Մարդ որքան հրաժարի հաւատարմութեան սկզբունքէն- գլխաւոր սկզբունքը սկառուական դաւանանքին-, այնքան իր մէջ կը մեռնի Հ.Մ.Ը.Մ.ն ու հայր:

Հաւատարմութիւնն է համագումարը Հ.Մ.Ը.Մ.ական մարդու առաքինութիւններուն: Հաւատարմութիւն ազգային արժէքներու, նահատակներու, սեփական ժողովուրդի, հայրենիքի եւ Գաւթի:

Հաւատարմութեան այս մօտեցումով պէտք է արժեւորել Եղեռնի 90ամեակին առիթով կատարուած Հ.Մ.Ը.Մ.ական ուխտագնացութիւնը դէպի Տէր Զօր եւ Մարկատէի, իբրեւ յարգանքի արտայայտութիւն անոնց, որոնք ազգային մեր խաչելութեան եւ յարութեան վկաները հանդիսացան:

Երեւոյթը սրտառու էր. տեսնել աւելի քան 300 Հ.Մ.Ը.Մ.ական սկառուներ, իրենց պատասխանատուներուն առաջնորդութեամբ, երկիրդած հաւատարմութեամբ կը վերակենդանացրեն յիշատակը այն հազար-հազարներուն, որոնք Տէր Զօրի ու Մարկատէի ճամբուն վրայ, անապատի աւազներուն մէջ, ինկան անշունչ, ինկան սովէն, մտրակէն, սուրէն ու տապարէն:

Երեւոյթը միանգամայն զօտեպնդիչ էր. տեսնել Հ.Մ.Ը.Մ.ական նոր սերունդի ներկայացուցիչներ, ազգային հաւատարմութեան իրենց գեղեցկագոյն պատկերին մէջ, միութեան աշխարհասփիռ 98 մասնաճիւղերուն անունով 98 ծաղկեպսակներ կը վետեղեն Տէր Զօրի ուխտավայր եկեղեցւոյ մէջ, ապա՝ աղօթքի մրմունջներու հետ,

Եղեռնադաշտը կը թնդացնեն «Յառաջ նահատակ»ով, իրենց ժողովուրդի սուգին ու տառապանքին միացնելով կամքն ու հաւատքը՝ վաղուան յաղթանակին:

Հ.Մ.Ը.Մ.ական հաւատարմութեամբ շաղախուած ուխտ մը նուիրագործուեցաւ Տէր Զօրի ու Մարկատէի մէջ, աննահանջ թափ տալու համար ազգային-պահանջատիրական մեր երթին եւ գալիք օրերուն նայելու համար աւելի՛ ինքնավստահ ու ջլապինդ:

Այսպէս, Հ.Մ.Ը.Մ. ականջայուր դարձաւ իր նահատակներուն, որոնք անապատի աւազներէն ու Եփրատի խորերէն բարձր աղաղակեցին արդար դատի ու ազգային իրաւունքի հետապնդման պահանջը: Պահանջը կառչած մնալու հայ ժողովուրդի անկորնչելի արժէքներուն՝ հայրենիքին, արդարութեան, իրաւունքին եւ արժանապատուութեան, որոնք Հ.Մ.Ը.Մ.ական մարդու հոգեկան կառոյցին մէջ արդէն ձուլուած են ոգեկանութեան այնպիսի շունչով մը եւ արմատացած են այնպիսի խոր ու հաստատուն հիմերով, որ իր ներկայ մեծութեան հասցուցած են միութիւնը:

Տէր Զօրն ու Մարկատէն խունկ ու մոմ վառեցին իւրաքանչիւր Հ.Մ.Ը.Մ.ականի հոգիին խորը, դարձան խորհրդանիշներ ազգային զոհաբերութեան եւ ուխտաւոր սերունդին ճամբով բոլորին, անխտի՛ր բոլորին, փոխանցեցին պատգամ մը նուիրական.-

Խոնարհեցէք ձեր նահատակներու յիշատակին դիմաց: Խորհրդածեցէք անոնց մասին գիտակցութեան եւ պատասխանատուութեան անկեղծ ճիգով: Անոնց հայելիին մէջ դիտեցէք ու քննեցէք ձեր խիղճերը: Անոնց տեսլականին հաւատարմութեամբ ապրեցէք ձեր կեանքը, եւ միայն այն ատեն գտած կ'ըլլաք հայ ժողովուրդի տեսական յաղթանակին ու յաւերժութեան գաղտնիքը:



Հ.Մ.Ը.Մ. ԻՐ ԺՈՂՈՎՈՒՐԴԻ ՆԱՀԱՏԱԿՆԵՐՈՒՆ, ՅԻՇՈՂՈՒԹԵԱՆ ԵՒ ՊԱՀԱՆՋԱՏԻՐՈՒԹԵԱՆ ՎԿԱՆ ԵՂԱՒ ՄԱՐԿԱՏԷԻ ԵՒ ՏԷՐ ԶՕՐԻ ԱՆԱՊԱՏՆԵՐՈՒՆ ՄԷՉ

Հայկական Յեղասպանության 90ամեակի ոգեկոչման իր նախաձեռնությունները շարքին, «Հ.Մ.Ը.Մ. եւ Ապրիլ 24» գրքոյկին հրատարակությունն է սկսող տական յատուկ կրթնաշնչի պատրաստությունն է եւ, Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչությունը կատարեց իր կեդրոնական ձեռնարկը՝ ուխտագնացությունը դէպի Մարկատէ եւ Տէր Զօր, ոգեկոչելու համար Յեղասպանության զոհերու յիշատակը եւ արտայայտելու համար միությունն հաւատարմությունն ու ազգային նախանձախնդրությունը՝ հանդէպ իր ժողովուրդին եւ դատին:

Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչության նախաձեռնությամբ եւ Հ.Մ.Ը.Մ.ի Սուրբոյ Շրջանային Վարչության կազմակերպությամբ, ուխտագնացությունը ունեցաւ եօթը ժաման տեւողութիւն, սակայն անոր պատրաստութիւնն ու արձագանգը երկարեցան ամիսներու վրայ:

Ուխտագնացության որոշումը տրուեցաւ Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչության Բ. լիազումարին, Օգոստոս 2004ին, Երեւանի մէջ: Այնուհետեւ, պատրաստությունները ընթացք առին այս առիթով Տէր Զօրի Սրբոց Նահատակաց եկեղեցւոյ շրջափակին մէջ յուշաքարի մը զետեղման համար:

Հոկտեմբեր 2005ը եղաւ ուխտագնացության յարմար թուականը: 1 Հոկտեմբերի երեկոյեան, Պէյրութէն, Պաղտատէն, Ամմանէն եւ Քուէյթէն Հ.Մ.Ը.Մ.ի սկսողական պատւիրակները ժամանեցին Հայկ, ուր իրենց կը սպա-



սէին Հ.Մ.Ը.Մ.ի Սուրբոյ ընտանիքը եւ նախապէս Հայկ Ժամանած՝ Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.ի սկսողները, գլխաւորությամբ՝ Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչության անդամ եղբ. Յարութ Յարութիւնեանի:

Կէս դիշերին, ժամը 1ին, ուխտաւորները, թիւով 345 սկսողներ եւ վարչական պատասխանատուներ, օթոպիւսներով Հայկէպէն ուղղուեցան անապատային չոր եւ արեւակէջ Մարկատէ քաղաքը, ուր հասան առաւօտեան ժամը 7ին:

ՄԱՐԿԱՏԷ. ՈՒՆՏԱՌՈՐՆԵՐՈՒՆ ՀԱՆԳԻՍԱՌՈՐ ԵՐԳՈՒՄԸ

Հայկական Յեղասպանության զոհերու յիշատակին կառուցուած Մարկատէի մատուռը եղաւ Հ.Մ.Ը.Մ.ի ուխտաւորներուն առաջին կայանը: Մատրան մուտքին, Հ.Մ.Ը.Մ.ի Հայկէպի շեփորախումբը ազգային եղանակներով ողջունեց ուխ-

տաւոր քոյրերն ու եղբայրները, որոնք խոր երկիրդածութեամբ շրջանակ մը կազմեցին մատրան շուրջ եւ Տէրունական աղօթքէն ետք, կատարեցին Կեդրոնական Վարչութեան կողմէ պատրաստուած յատուկ երգումը, ուխտելով՝

«Հաւատարիմ մնալ մեր մէկ ու կէս միլիոն նահատակներու կտակին եւ անմոռաց պահել անոնց յիշատակը:

«Յիշեցնել աշխարհին, որ ես մէկ հաւատաւոր ժառանգորդն եմ Մեծ Եղեռնի սերունդին եւ ուխտեալ գիւնուորը մեր նահատակներու արդար դատին:

«Ամբողջ ուժովս պայքարիմ՝ ապահովելու համար Հայկական Յեղասպանութեան ամբողջական նահաջումը եւ հայ ժողովուրդի անժամանցելի իրաւունքներուն ձեռքբերումը»:

Տեղին է նշել, որ ուխտաւորները կ'առաջնորդէին Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան անդամ եղբայրներ՝ Գառնիկ Մկրտիչեան, Ստեփան Տէր Պետրոսեան, Պատրիկ Կիւլպէնկեան, Գէորգ Կարապետեան, Յարութ Յարութիւնեան, «Մարգրիկ» պաշտօնաթերթի խմբագիր եղբ. Վիգէն Աւագեան, ինչպէս նաեւ՝ Հ.Մ.Ը.Մ.ի Սուրիոյ եւ Լիբանանի Շրջանային Վարչութիւններու եւ Շրջանային Սկստակական Խորհուրդներու ներկայացուցիչներ:

ՏԵՐ ԶՕՐ. ՊՍԱՏԱՐԱԳԸ, ՅՈՒՇԱՔԱՐԻ ԲՆՅՈՒՄԸ...

Կէս ժամուան յիշատակի եւ յարգանքի արարողութեանէն ետք, առաւօտեան ժամը 7.30ին, ուխտաւորները Մարկատէէն ճամբայ ելան դէպի Եղեռնադաշտ Տէր Զօր, ուր զիրենք դիմաւորեցին տեղւոյն եկեղեցւոյ թաղականութեան անդամները եւ Հ.Մ.Ը.Մ.ի Տէր Զօրի սկստակական նորաստեղծ միաւորին գալլիկ-արծուկները:

Առաւօտեան ժամը 9.30ին, Տէր Զօր ժամանեց նաեւ Բերիոյ Թեմի Առաջնորդ Շահան Արք. Սարգիսեան, ընկերակցու-

թեամբ շքախումբի մը, որուն մաս կը կազմէին Տաթեւ Քհնյ. Միքայէլեան, Խորէն Քհնյ. Պէրթիզեան, Բերիոյ Թեմի քաղաքական ժողովի անդամներ՝ տղթ. Մանուկ Իսկէնտէրեան, Զարեհ Փոյատեան եւ Լեւոն Զէքի Ետալեան: Տէր Զօրի Սրբոց Նահատակաց եկեղեցւոյ մուտքին, ազգային պատասխանատուներն ու Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան անդամները ողջունեցին ուխտաւոր սկստակները, որոնք միութեան աշխարհասփիւռ 98 մասնաճիւղերուն անունով 98 ծաղկեպսակով տողանցեցին դէպի եկեղեցի առաջնորդը ճամբան եւ տպաւորիչ ու հոգեխօս միջնորդութիւն մը մէջ՝ ծաղկեպսակները գետեղեցին «անձանօթ գինուոր»ի խորհուրդը մարմնացնող, եկեղեցւոյ շրջափակի անմար կրակին շուրջ: Երկու ծաղկեպսակներ ալ գետեղուեցան Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան եւ Տէր Զօրի թաղականութեան կողմէ:

Ապա, բոլորը ուղղուեցան եկեղեցի, ուր Ս. Պատարագ եւ հոգեհանգստեան պաշտօն մատուցուեցաւ թուրքի եաթաղանին գոհ գացած 1.5 միլիոն անմեղ զոհերու յիշատակին: Յաւարտ Ս. Պատարագի, ուխտաւորները Ս. Հաղորդութիւն ստացան պատարագիչ Խորէն Քհնյ. Պէրթիզեանէն:

Յաջորդեց յուշաքարի բացումը: Յուշաքարը հաստատուած էր հայրութեան վերականգնումը խորհրդանշող «Հերոսապատում» պատին մէկ անկիւնը եւ կը ներկայացնէր Հ.Մ.Ը.Մ.ի մեծ ընտանիքին յաւերժութեան, արդարութեան եւ խաղաղութեան ձգտումը: Յուշաքարին վրայ արձանագրուած էին միութեան 98 մասնաճիւղերուն անունները՝ հիմնադրութեան թուականներով:

Յուշաքարին պաշտօնական բացումը կատարեցին Բերիոյ Թեմի Առաջնորդ Շահան Արք. Սարգիսեան, Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան ատենապետ եղբ. Գառնիկ Մկրտիչեան եւ յուշաքարի բարերար՝ եղբ. Աբրահամ Մարտիրոսեան:



Հոգեհանգստեան պաշտօն՝ «անձանօթ գինուոր»ի անմար կրակին շուրջ:



Հանդիսատք երդում՝ Մարկատէի մատրան առչել:

Լուսանկարները՝ Տիգրան «Taj Color»ի

... ԵՒ 90ԱՄԵԱԿԻ ՀԱՆՎԻՍՈՒԹԻՒՆԸ

Կէսօրուան ժամը 11.30ին, Սրբոց Նահատակաց եկեղեցւոյ շրջափակը զգեցաւ հանդիսատք մթնոլորտ, երբ Պաղտատի սկառտական քառաձայն երգչախումբը «Յառաջ նահատակ»ը հնչեցուց վեհօրէն, համայն մարդկութեան յուշելով, որ Տէր Զօրը այլեւս մարդկային սպանդանոցի սոսկումը բերող քաղաքը չէ Հ.Մ.Ը.Մ.ի համար, այլ՝ խորհրդանիշը ազգային վերապրումի եւ վերականգնումի:

«Յառաջ նահատակ»ով բացուած յայտարարուեցաւ օրուան հանդիսութիւնը:

Կիրարկուեցաւ զեղարուեստական պատշաճ յայտագիր: Եղբ. Գէորգ Յակոբճեան (Հալիպի մասնաճիւղէն) ասմունքեց Պարոյր Սեւակի «Մասիսները»: Եղբ. Եղիա Քիլիճեան (Հալիպի մասնաճիւղէն) երգեց «Պետոյի յիշատակին» եւ «Կուռնկ» երգերը: Եղբ. Զաւէն Զաքարեան (Գամիշլիի մասնաճիւղէն) ասմունքեց Սիամանթոյի «Դարերու վրէժը», իսկ Հ.Մ.Ը.Մ.ի Պաղտատի քառաձայն երգչախումբը, ղեկավարութեամբ՝ եղբ. Արա Քիչմիչեանի, ներկայացուց «Տէր Զօր», «Վուշ վուշ» եւ «Կոյր աշուղը» երգերը:



Հանդիսութեան ընթացքին խօսքեր արտասանեցին Հ.Մ.Ը.Մ.ի Սուրբոյ Շրջանային Վարչութեան ատենապետ եղբ. Պօղոս Պալիճեան, Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան անդամ եղբ. Կարօ Թիւթիւնճեան եւ Բերիոյ Թեմի Առաջնորդ Շահան Արք. Սարգիսեան:

Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան եղբայրները յուշաքարին շուրջ:

Զախէն աջ՝ եղբայրներ Կարօ Թիւթիւնճեան, Պատրիկ Կիւլպէնկեան, Գառնիկ Մկրտիչեան, Ստեփան Տէր Պետրոսեան, Յարութ Յարութիւնեան եւ Գէորգ Կարապետեան:



Յուշանուէրներու փոխանցում՝ Բերիոյ Թեմի Առաջնորդ Շահան Արք. Սարգիսեանին, յուշաքարի բարերար եղբ. Աբրահամ Մարտիրոսեանին եւ Տէր Զօրի թաղականութեան ներկայացուցիչ՝ եղբ. Յարութ Վարդանեանին:

Եղբ. Պօղոս Պալէոզեան իր խօսքին մէջ անդրադարձաւ չափական Ցեղասպանութեան հետեւանքները յաղթահարելու անհրաժեշտութեան եւ կոչ ուղղեց շարունակելու պահանջատիրական մեր երթը՝ մինչեւ մարդկային ու ազգային մեր բոլոր իրաւունքներուն վերատիրացումը:



Եղբայրը յայտնեց, որ Ցեղասպանութեան զոհերէն մէկն էր Հ.Մ.Ը.Մ.ի գաղափարախօսուան վիրայ՝ Շաւարշ Քրիսեանը, որ նահատակուեցաւ 1915ին, սակայն անոր գաղափարը մնաց անմեռ եւ երեք տարի ետք՝ 1918ին, Հ.Մ.Ը.Մ.ը դարձաւ իր ժողովուրդի յարուստեան մեծագոյն վկան:

Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան պատգամը փոխանցեց եղբ. Կարօ Թիւթիւնճեան: Ան ըսաւ, որ «Ամէն մէկ Հ.Մ.Ը.Մ.ականի մէջ անմահութեան մէկ գաղտնիքը կայ մեր փոքր ժողովուրդին, որովհետեւ ամէն մէկ անգամ կոչուած է որակ մը դառնալու իր հայրենիքին ու ցեղին համար»:

Շարունակելով, եղբ. Թիւթիւնճեան հաստատեց. «Ազգին ու հայրենիքին ծառայելը վե՛մն է հայ սկաուտի դաւանանքին, անձնուրաց ծառայութիւն մը, որուն սահմանները կրնան հասնիլ մինչեւ գերագոյն զոհողութիւն» (եղբոր խօսքին ամբողջութիւնը տեսնել էջ 9):

Հանդիսութեան եզրափակիչ խօսքը արտասանեց Բերիոյ Թեմի Առաջնորդ Շահան Արք. Սարգիսեան, որ ըսաւ. «Կ'այցելենք Հայկական Ցեղասպանութեան 90ամեակի առթիւ մեր ուխտը վերանորոգելու մեր պատմութեան եւ ժողովուրդի նահատակներուն դիմաց, մեր ուխտը վերանորոգելու Աստուծոյ եւ ամբողջ մարդկութեան դիմաց, ու ապրելու արժանաւորութեամբ, պատուով եւ բարձր հպարտութեամբ»:



Վերբ. Ծաղկեպատի զետեղում՝ Հ.Մ.Ը.Մ.ի Տէր Զօրի սկաուտական նորաստեղծ միաւորին կողմէ:

Վարր. Հ.Մ.Ը.Մ.ի Պաղտատի սկաուտական քառանկյն երգչախումբը, ղեկավարութեամբ՝ եղբ. Արա Քիշմիշեանի:



Ուխտատրները շեփորախումբի առաջնորդութեամբ կը ժամանեն Եփրատի կամուրջը:



Մեխակներ՝ հազար-հազարներու յաիտենական գերեզման դարձած Եփրատի հոսանքին:

Իր խօսքը ներկայ սկառուներուն ուղղելով, Սրբազանը յայտնեց. «Մենք այսօր հաւաքուած ենք այս յուշարձանին առջեւ: Սակայն, այս յուշարձանը յուշարձան մը չէ արձանի իմաստով, այլ՝ յուշարար մըն է, որ մեզի կը յիշեցնէ թէ ի՞նչ պատահած է մեր պատմութեան մէջ, մեզի կը յիշեցնէ, թէ ինչպիսի՞ ժողովուրդ մը եղած ենք, ի՞նչ առաքելութեան հրաւիրուած ենք եւ պայքարի ի՞նչ մարտահրաւերներ կը դիմագրաւենք: Ա՛յս գաղափարականով, ա՛յս հոգիով Հ.Մ.Ը.Մ.ը ապրեցաւ, կ'ապրի ու պիտի ապրի մեր պատմութեան, մեր ժողովուրդի սրտին մէջ, որովհետեւ մեր ժողովուրդի ամբողջականութեան եւ միասնականութեան ամենէն գեղեցիկ արտայայտութիւնը եղող կազմակերպութիւններէն մէկը կը ներկայացնէ ան: Այս յուշաքարին մէջ կը տեսնեմ՝ վերածնունդը մեր ժողովուրդին եւ այդ վերածնունդին մէջ մենք կը սկսինք նոր կեանք, ո՛չ թէ կեանքի նոր տեսակ, այլ՝ ամբողջութեամբ նոր կեանք մը, որ սկսաւ Սուրիայէն եւ տարածուեցաւ աշխարհով մէկ: Ապրիլեան եղեռնի համազգային այս յուշահամալիրը, հետեւաբար,

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԳԻՐ ՕՀՆՈՒԹԵԱՆ Հ.Մ.Ը.Մ.Ի ՄԵԾ ԸՆՏԱՆԻՔԻՆ

Հայրապետական օրհնութեամբ կ'ողջունենք Հ.Մ.Ը.Մ.ի մեծ ընտանիքը հայ ժողովուրդի նահատակութեան ու վերածննդեան սրբավայրին՝ Տէր Չօրի մէջ:



Արդարեւ, սա պահուն հաւաքուած էք այստեղ Հ.Մ.Ը.Մ.ի աշխարհասփիռ 98 մասնաճիւղերուն անունով Հայկական Յեղասպանութեան 90ամեակին առթիւ ձեր յարգանքը մատուցանելու մեր բիրաւոր նահատակներուն եւ ձեր ուխտը վերանորոգելու: Տէր Չօրը հռչակեցինք «Ազգային Ուխտավայր», որովհետեւ Տէր Չօրի մէջ ըլլալ չի նշանակեր միայն յիշել մեր նահատակները, այլ նաեւ՝ ուխտել հաւատարիմ մնալ անոնց նուիրական կտակին: Ուխտել՝ ապրիլ ու պայքարիլ այն սրբական արժեքներուն ու վեհ իտէայներուն համար, որոնց յաւերժացման ի խնդիր անոնք իրենց արիւնք թափեցին:

Այս գիտակցութեամբ ու յանձնառութեամբ Հ.Մ.Ը.Մ.ը ապրած ու գործած է: Մեր նահատակներու անմեռ յիշատակը կենդանի ներկայութիւն դարձած է միշտ Հ.Մ.Ը.Մ.ի կեանքին մէջ: Մեր ժողովուրդի արդար իրաւունքներուն հետապնդումը մնայուն ձգտում է եղած իւրաքանչիւր Հ.Մ.Ը.Մ.ականի համար:

Որպէս Հ.Մ.Ը.Մ.ականներ եկած էք ձեր մեծ ընտանիքին անունով յուշաքար մը վետեղելու Տէր Չօրի մէջ: Մեր սպասումն է, որ յուշաքարի այս վետեղումը ձեզի համար դառնայ շօշափելի արտայայտութիւն մը ու հրապարակային խոստում մը՝ վերանորոգելու ձեր ազգային ուխտը:

Մեր աղօթքն է, որ Բարձրեայն Աստուած միշտ դառնայ պաշտպան ու հովանի Հ.Մ.Ը.Մ.ի մեծ ընտանիքին:

Հայրական օրհնութեամբ եւ քրիստոնէական ջերմ սիրով:

Աղօթարար՝
ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ
ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ

յուշարար մըն է եւ վերածնունդի վկայագիրն ու վկայականն է մեր ժողովուրդին, ե՛ւ հայրենիքի, ե՛ւ Սփիւռքի մէջ» (Խօսքին ամբողջութիւնը տեսել էջ 10):

Յայտնենք, որ Հանդիսութեան ընթացքին տեղի ունեցաւ նաեւ յուշանուէրներու տուչութիւն: Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան ատենապետ եղբ. Գառնիկ Մկրտիչեան յուշանուէրներով պատուեց Բերիոյ Թեմի Առաջնորդը եւ Տէր Զօրի թաղականութեան ներկայացուցիչ՝ եղբ. Յարութ Վարդանեանը: Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան անդամ եղբ. Գէորգ Կարապետեան, իր կարգին, յուշանուէր մը յանձնեց յուշաքարի բարերար եղբ. Աբրահամ Մարտիրոսեանին:

Հանդիսութիւնը փակուեցաւ կէսօրուան ժամը 12:30ին, սկստական երգչախումբին կողմէ «Կիլիկիա» երգին խմբերգովմով:

**ԵՓՐԱՏ. ԶՈՎԵՐՈՒ ԺԱՌԱՆԳՈՐԴՆԵՐԸ
ԿՈՒԳԵԿՈՉԵՆ ԻՐԵՆՅ ԱՆԹԱՂ ՄԵՌԵԼՆԵՐԸ**

Ուխտագնացութեան ամէնէն յուզիչ պահը եղաւ 90ամեակի Հանդիսութեանէն ետք՝ Եփրատ գետ այցելութիւնը: Հոն, ուր ծանօթ երգին բառերով՝

«Կոյս աղջիկներ իրարու ձեռք բռնեցին,
Իրենք զիրենք Եփրատ գետը նետեցին»:
Եփրատը 1915էն սաղին տարբեր հնչեղութիւն եւ իմաստ

ունի հայ ժողովուրդին համար: «Անապատի հարս»ին՝ Տէր Զօրին կեանք տուող այս գետը 90 տարիէ հայութեան համար կեանք խո՛ղ գետ է, ուրկէ 1915ին արցունք եւ արիւն, վիշտ ու աղաղակ արտաբերուած է Զէքի փաշայի մոլեգնային ատելութեան զոհը դացած անմեղ հայորդիներուն կողմէ:

Հ.Մ.Ը.Մ.ի ուխտաւորները յամբարայլ ուղղուեցան Եփրատի նշանաւոր կամուրջը եւ անկէ վար նետեցին մէկական մեխակներ՝ ի յիշատակ այն հազար-հազարներուն, որոնց համար յաւիտենական գերեզման դարձաւ գետը:

Ուխտագնացութիւնը՝ հայ ժողովուրդի նահատակներուն, ազգային յիշողութեան եւ պահանջատիրութեան ոգեկոչումը իր աւարտին հասաւ յետմիջօրէի ժամը 2ին: Ուխտաւորները ճաշի հիւրը եղան Տէր Զօրի թաղականութեան ներկայացուցիչ եղբ. Յարութ Վարդանեանին, ապա անոնք իրենց շրջանները վերադարձան իրենց նահատակներու յիշատակին եւ զոհողութեան ոգիին մինչեւ վերջ տէ՛րը կանգնելու յանձնառութեամբ:

Երկու շաբաթ ետք, Հայաստանի Հանրային Պատկերասփիւռի առաջին արիքը հաղորդումով մը անդրադարձաւ 90ամեակի այս եզակի ոգեկոչման, մեծապէս գնահատելով Հ.Մ.Ը.Մ.ի նախաձեռնութիւնը:

TOGETHER WE ARE STRONGER
ՄԻԱՍԻՆ ԱԻԵԼԻ ԶՕՐԱԴՈՐ ԵՆՔ

ԱՖՀԻԼ AFHIL
Armenian Mutual Fund
Tel. / Fax: 01 242556 - 242557

ՄԵՐ ՔԱՆՈՒԱԾՔԸ ԴԵՊԻ ՀԱՅՐԵՆԻ ՍՐԲԱԶԱՆ ԼԵՌ

(Հ.Մ.Ը.Մ.ի ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԱՆԴԱՄ ԵՂԲ. ԿԱՐՕ ԹԻԻԹԻԻՆՃԵԱՆԻ ԽՕՍՔԸ, ՏԷՐ ԶՕՐԻ ՄԷՋ Հ.Մ.Ը.Մ.ի ՅՈՒՇԱՔԱՐԻ ԲԱՑՄԱՆ ՀԱՆԴԻՍՈՒԹԵԱՆ)

Հայ սկառուտը, Հ.Մ.Ը.Մ.ական սկառուտը, իբրև հայ ժողովուրդի ԱՐԻ՝ գաւակը, հայ ժողովուրդի ամբողջական շարքերուն հետ, աշխարհասփիւռ իր մասնաճիւղերով կը խորհարհի օրուան մեծ խորհուրդի բազմինն առջեւ:

Ուր կը միայ հայոց պատմութեան մեծագոյն աղէտին յիշատակը:

Ուր խունկի տեղ կը բուրէ նահատակի սրբազան աճիւն, իսկ արցունքի տեղ՝ նահատակի պայծառ գիտակցութիւն, որմէ կը լուսաւորուի մեր ուղին, ամրապնդուած կամարներով ու կամուրջներով՝ Ծիծեռնակաբերդէն մինչեւ Պիքֆայա, Մարսէյէն մինչեւ Մոնթպելյօ եւ մինչեւ երկրագունդի յայտնի կամ անյայտ տարածքին վրայ ապրող ամէն մէկ հայ, որ կ'ապրի, իբրև յուշարձան եւ բաբախուն տաճար:

Արդարեւ, ամէն մէկ Հ.Մ.Ը.Մ.ականի մէջ աճիւն մը կայ մեր հերոսներէն, որովհետեւ ամէն մէկ անդամ ծառայութեան կոչուած է անմահացած ազգային իտէալներու ի խնդիր:

Ամէն մէկ Հ.Մ.Ը.Մ.ականի մէջ անմահութեան մէկ գաղտնիքը կայ մեր փոքր ժողովուրդին, որովհետեւ ամէն մէկ անդամ կոչուած է որակ մը դառնալու իր հայրենիքին ու ցեղին համար:

Ամէն մէկ Հ.Մ.Ը.Մ.ականի մէջ պատմութիւնը կայ հայ ժողովուրդին, որովհետեւ պատմութիւնը անցեալ մը չէ միայն, այլ՝ ներկայ ու մանաւանդ՝ ապագայ:

Ազգին ու հայրենիքին ծառայելը վէմն է հայ սկառուտի դաւանանքին, անձնուրաց ծառայութիւն մը, որուն սահմանները կրնան հասնիլ մինչեւ գերագոյն զոհողութիւն:

Այսօր կ'ոգեկոչենք Մեծ Եղեռնի 90ամեակը: Այսօր Ապրիլ 24 է մեզի համար: Մեր ոխերիմ թշնամին չուզեց որ հայ տղան տողանցէ, չուզեց որ հայ մայրը ծննդաբերէ, չուզեց որ հայ հողը պտղաբերէ: Կասեցնել ուզեց հայ ժողովուրդի շքերթը ընդհանուր ազգերու պատմութեան մէջ: Ուզեց մէկ հայ ձգել, այն ալ ... թանգարանի մէջ:

Բայց, այս բոլորէն ետք, մենք որոշած ենք ապրիլ:



Այսպէս-
Դաշտ ունենանք թէ ոչ, ախոյեան պիտի տանք:
Դպրոց ունենանք թէ ոչ, հայերէն պիտի խօսինք:
Եկեղեցի ունենանք թէ ոչ, պիտի աղօթենք առ բարձրեալն Աստուած:

Մէկ խօսքով՝ պիտի ապրինք:
Շաւարշ Քրիսեաններու, Գրիգոր Յակոբեաններու, Վահան Չերազներու շունչով գրուած «Յառաջ նահատակ» մեր սերունդին համար պիտի մնայ «զհաց մեր հանապազօր» եւ մեր քայլուածքը պիտի ուղղէ դէպի հայրենի սրբազան լեռ:

Այսօր, մեր սրտերը կը պոռթկան ու Սարոյեանի բառերով կ'ըսենք.

«Օ՛ն, կործանեցէք այս ցեղը: Ըսէք թէ նորէն 1915 թուականն է: Պատերազմ կայ: Քարուքանդ ըրէք Հայաստանը: Փորձեցէք, եթէ կարող էք: Քշեցէք հայերը իրենց տուններէն անապատները: Թողէք զանոնք առանց հացի ու ջուրի: Այրեցէք անոնց տուններն ու եկեղեցիները: Եւ տեսէք, թէ ցեղը պիտի չվերապրի՞ նորէն»:

Ու մեր հզօր քայլերդ ընդերքէն կշռոյ՞ պիտի առնեն մեր քայլերը՝

«Յառաջ, նահատակ ցեղի անմահներ»:

ՏԵՐ ԶՕՐԻ, ՆՈՐ ԱՆՈՒՆՈՎ՝ ՏԵՐ ՀԶՕՐԻ ԶՕՐՈՒԹԵԱՄԲ ՄԵՐ ԺՈՂՈՎՈՒՐԴԸ ՎԵՐՍՏԻՆ ԿԵԱՆՔԻ ԿՈՒ ԳԱՅ

(ԲԵՐԻՈՅ ԹԵՄԻ ԱՌԱՋՆՈՐԴ՝ ՇԱՀԱՆ ԱՐՔ. ՍԱՐԳԻՍԵԱՆԻ ՊԱՏԳԱՄԸ, ՏԵՐ ԶՕՐԻ ՄԷՋ Հ.Մ.Ը.Մ.Ի ՅՈՒՇԱՔԱՐԻ ԲԱՑՄԱՆ ՀԱՆԴԻՍՈՒԹԵԱՆ)

Յ ու զ ու լ մ ն ա - խառն ուրախութեամբ եւ հ ա ր ա տ ու թեամբ թող լեցին ձեր սիրտերը: Մենք չենք գտնուիր շիրիմներու մէջ: Մենք չենք գտնուիր գերեզմաններու մէջ: Մենք չենք գտնուիր լերդացած արեան մէջ, ուր կեանքը կ'աւարտի եւ մահը կը յաղթանակէ: Մենք կը գրտնըւինք մեր ժողովուրդի պատմութեան ամէնէն դժխեմ էջը փակող եւ նոր կեանքի սկիզբը յայտնաբերող ՏԵՐ Զօրի մէջ: ՏԵՐ Զօրի, նոր անունով՝ ՏԵՐ Հօրի գորութեամբ մեր ժողովուրդը վերստին կեանքի կու գայ, մարդկութեան մէջ իր պատմական երթը եւ առաքելութիւնը շարունակելու համար:



լորս կը ներշնչէ, ու մենք կը տեսնենք որ մեր նահատակները մեզ կը միացնեն Հայաստան աշխարհէն մինչեւ Սփիւռքի հեռաւոր ասիերը եւ անոնց արիւնը մեր մէջ կը վազէ նոր արեամբ, նոր շունչով ու ոգիով:

Հոկտեմբեր 2ի նուիրական այս Կիրակին մեզ կը միացնէ նոր Ապրիլ 24 ապրելու, գոյատեւելու եւ յաղթանակելու համար այն մեծ ընտանիքը, գաղափարականը, «Բարձրացիր-բարձրացուր»ի նուիրական սկզբունքները, գորս Հ.Մ.Ը.Մ.ը մեր պատմութեան մէջէն քաղելով, մարդկութեան ազնուագոյն զգացումներէն ընդօրինակելով, իւրացնելով, ինքզինք յայտնաբերեց իբրեւ Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միութիւն:

Աստուծոյ կամքով, նահատակներու կտակով, Հ.Մ.Ը.Մ.ականի յանձնառութեամբ, ուխտաւորաբար, միասնաբար կ'այցելենք ՏԵՐ Զօր: Կ'այցելենք Հայկական Յեղասպանութեան 90ամեակի առթիւ մեր ուխտը վերանորոգելու մեր պատմութեան եւ ժողովուրդի նահատակներուն դիմաց, մեր ուխտը վերանորոգելու Աստուծոյ եւ ամբողջ մարդկութեան դիմաց, ու ապրելու արժանաւորութեամբ, պատուով եւ բարձր հպարտութեամբ:

Այսօր, մեր նահատակներուն հետ, Հ.Մ.Ը.Մ.ը մեզ միացուց իրարու: Իրաքէն եկող մեր հարազատները, Յորդանանէն, Քուէյթէն, Լիբանանէն եւ մայր հայրենիքէն եկող մեր սիրելի քոյրերն ու եղբայրները Հ.Մ.Ը.Մ.ի գաղափարականով, Հ.Մ.Ը.Մ.ի դրօշին ներքեւ եւ Հ.Մ.Ը.Մ.ի վեհ սկզբունքներով առաջնորդուած կը վերանորոգեն իրենց ուխտը նահատակներուն առջեւ՝ հաւատարիմ մնալու անոնց կտակին:

Մեր ժողովուրդի ստրկական տառապանքի պատմութեան էջերէն 1915ը եթէ փակուող էջ մը պիտի նկատուէր, բացուող առաւօտու եւ արեւածագի՝ վերածեց մեր ժողովուրդը Աստուծոյ օգնութեամբ եւ իր գորութեամբ: 1918ով, Հ.Մ.Ը.Մ.ով եւ Հայաստանի նորանախացեալ հանրապետութեամբ մեր ժողովուրդը վերսկսաւ իր կեանքը պատմութեան մէջ՝ իրաւական, մարդկային ու պատմական իր տեղով, դիրքով եւ, ինչու չէ նաեւ, փառքով:

Հայկական Յեղասպանութեան 90ամեակին, որ Արամ Ա. Վեհափառին կողմէ հռչակուած է «Ազգային պահանջատիրութեան տարի», մենք նոր գորութեամբ ու վճռակամութեամբ հաւաքուած ենք այստեղ, միասնակամութեամբ շարունակելու Հայ Դատի եւ պահանջատիրութեան այն պայքարը, որուն արդիւնքները հեռաւոր ապագային չեն, որուն արդիւնքները արմատաւորուած են ՏԵՐ Զօրի մէջ եւ ընձիւղուած են ամբողջ աշխարհի տարածքին:

Այսօր հաւաքուած ենք բոլորս եւ ամէն մէկուս սրտին մէջ մեր նահատակներուն կանչն է որ մեզ կը հրաւիրէ քովէ-քով՝ մէկ սիրտ, մէկ հոգի, մէկ ազգ, մէկ եկեղեցի, մէկ հաւատքով ու մէկ տեսիլքով շարունակելու մեր երթը՝ մինչեւ ամբողջական յաղթանակ:

Մեր մօտիկ եւ հեռաւոր անցեալի, նաեւ ներկայի բոլոր թշնամիները պիտի անդրադառնան, որ արդարութեան համար պայքարող ժողովուրդ մը իրաւատէքն է իր պատմութեան (իրբեւ անցեալի), ներկային (իրբեւ հայրենիքի) եւ ապագային (իրբեւ մէկ ու ամբողջական Հայաստանի), իր եկեղեցիով, հաւատքով ու պահանջատիրութեամբ:

Այս խօսքերը իմ խօսքերս չեն, որովհետեւ տեղավայրը բո-

Մեր մօտիկ եւ հեռաւոր անցեալի, նաեւ ներկայի բոլոր թշնամիները պիտի անդրադառնան, որ արդարութեան համար պայքարող ժողովուրդ մը իրաւատէքն է իր պատմութեան (իրբեւ անցեալի), ներկային (իրբեւ հայրենիքի) եւ ապագային (իրբեւ մէկ ու ամբողջական Հայաստանի), իր եկեղեցիով, հաւատքով ու պահանջատիրութեամբ:

Մենք այսօր հաւաքուած ենք այս յուշարձանին առջեւ: Սակայն, այս յուշարձանը յուշարձան մը չէ արձանի իմաս-

տով, այլ՝ յուշարար մըն է, որ մեզի կը յիշեցնէ թէ ի՞նչ պատահած է մեր պատմութեան մէջ, մեզի կը յիշեցնէ, թէ ինչպիսի՞ ժողովուրդ մը եղած ենք, ի՞նչ առաքելութեան հրաւիրւած ենք եւ պայքարի ի՞նչ մարտահրաւէրներ կը դիմագրաւենք: Այս գաղափարականով, այս հոգիով Հ.Մ.Ը.Մ-ը ապրեցաւ, կ'ապրի ու պիտի ապրի մեր պատմութեան, մեր ժողովուրդի սրտին մէջ, որովհետեւ մեր ժողովուրդի ամբողջականութեան եւ միասնականութեան ամէնէն գեղեցիկ արտայայտութիւնը եղող կազմակերպութիւններէն մէկը կը ներկայացընէ ան: Այս յուշարարին մէջ կը տեսնեմ վերածնունդը մեր ժողովուրդին եւ այդ վերածնունդին մէջ մենք կը սկսինք նոր կեանք, ո՛չ թէ կեանքի նոր տեսակ, այլ՝ ամբողջութեամբ նոր կեանք մը, որ սկսաւ Սուրիայէն եւ տարածուեցաւ աշխարհով մէկ: Ապրիլեան Եղեռնի համազգային այս յուշահամալիրը, հետեւաբար, յուշարար մըն է եւ վերածնունդի վկայագիրն ու վկայականն է մեր ժողովուրդին, ե՛ւ հայրենիքի, ե՛ւ Սփիւռքի մէջ:

Այսօր, Միջին Արեւելքը կ'ապրի իր տագնապներով: Իրաքէն եկող մեր քոյրերը եւ եղբայրները հազարումէկ փորձանքի եւ դժուարութեան մէջն են կ'անցնին: Լիբանանէն եկող մեր քոյրերը եւ եղբայրները քաղաքացիական, ընկերային, հասարակական հազարումէկ դժուարութիւններու մէջն են կ'անցնին: Մեզ չընթացող բոլոր ժողովուրդները, առանց բացառութեան, անցումային շրջանէ մը, փոփոխութիւններու մէջն են անցնելով, նորոգութեան մարտահրաւէրին առջեւ կանգնած են: Այս իմաստով, երբ Հ.Մ.Ը.Մ-ը կու գայ 90ամեակի

առիթով կը վերանորոգէ իր ուխտը, հաւատամքը եւ հաւատարմութիւնը՝ հանդէպ նահատակներուն, պայքարի ճամբով շարունակելու իր ներկայութիւնը ազգային ու քաղաքացիական մեր կեանքին մէջ, մենք այս առիթով միասնաբար, ամբողջ արաբ ժողովուրդին, արաբական աշխարհին ու այս պարագային՝ սուրիական հայրենիքին մեր երախտագիտութիւնը կը յայտնենք, մեզի հանդէպ իրենց ցուցաբերած եղբայրական եւ քրոջական վերաբերումին համար:

Կը մաղթենք, որ Միջին Արեւելքի եւ ամբողջ աշխարհի մէջ խաղաղութիւն տիրէ: Խաղաղութիւնը իրաւունքով եւ արդարութեամբ կ'ըլլայ: Իրաւագրկուած ժողովուրդներու իրաւունքներուն վերատիրացումով կ'ըլլայ: Այս ամէնէն կարեւոր ու հիմնական սկզբունքն է, որուն զո՞հ գացած ենք մենք ալ, որուն զո՞հ կ'երթան ժողովուրդներ, եթէ կառչած չըլլան այն հիմնական սկզբունքներուն, որոնք իրարու կը միացնեն իրենց զաւակները:

Բարձրորէն գնահատելով Հ.Մ.Ը.Մ-ի Կեդրոնական Վարչութիւնը, պատասխանատուները, շրջանները եւ այստեղ գտնուող քոյրերն ու եղբայրները, յաջողութեան մաղթանքներ արտասանելու փոխարէն, բոլոր կը հրաւիրենք ականջները բանալու եւ մեր խօսքին ծաղկումը, անոր ճառագայթումը, անոր վրայ իր օրհնութիւնը բերող Արամ Ա. Վեհափառին օրհնութեան խօսքը լսելու, այդ խօսքին հաւատարիմ՝ մեր շարքերը խտացնելու եւ քայլերը ուղղելու դէպի յառա՛ջ, դէպի յառա՛ջ, դէպի յաղթանա՛կ:



Travel Ways - Egypt

NILE CROCODILE CRUISES





Incoming Tour Operator
Hotel & Cruise Reservation
Transportation
Excursions

Attia el Sawalhy St., Serag Center Tower#1
 from Makram Ebeid- Nasr City, Cairo, Egypt
 Tel: 02 2739400/500/600
www.travelways-egypt.com
marketing@twaysegy.com

ԴԷՊԻ ԳԵՐԱՉԱՆՅՈՒՄ ԾՐԱԳՐՈՒԱԾ ԵՒ ՀԱՒԱՔԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՈՎ

(Բ. ՄԱՍ)

Հրաչ Տէր Սարգիսեան ՄՈՆԹՐԷԱԼ

ՀՄԼՄ-ի գործունէութեան զանազան բնագաւառներուն վերաբերող աշխատանքի մեր ուղեգիծը, իբրեւ նպատակ եւ գործնական առաջադրանք, ներկայացուցինք «Մարզիկ»-ի անցեալ թիւով: Նշեցինք նաեւ նիւթերու բաժանումներն ու ենթաբաժանումները, որոնց ընդհանուր գիծերով կ'անդրադառնանք այսօր:

Ա. ՎԱՐՉԱԿԱՆ

Ծրագրին վարչական աշխատանքները նպատակ ունին մասնագիտական սեմինարներու կազմակերպում, ապագայ ղեկավար քատրերու պատրաստութիւն, փոքրաթիւ մասնաճիւղերու աշխուժացում եւ առաջնահերթաբար՝ միութեան շարքերու երիտասարդականացում: Առ այդ, նպատակայարմար է դիմել հետեւեալ միջոցներուն.-

- Միօրեայ սեմինարներու ճամբով շրջանի երիտասարդներու հետ խորհրդակցութիւններու կազմակերպում:
- Վարչութիւններու եւ Սկստակական Խորհուրդներու կազմերու 25-30 առ հարիւրի երիտասարդականացում:
- Հրապարակային ձեռնարկներու ընթացքին ՀՄԼՄ-ի գործունէութեան ծանօթացում՝ տաղաւարներու միջոցով:
- Ղեկավար քատրերու պատրաստութեան դասախօսական շարքի կազմակերպում:
- Վերոյիշեալ սեմինարները, դասախօսութիւններն ու աշխատանքները պիտի երկարին երեք տարուան վրայ եւ գործնապէս պիտի ընդգրկեն հետեւեալ նիւթերը.-
 - ♦ Ընտանիքի եւ դպրոցի կողքին, ՀՄԼՄ-ի դերը հայ երիտասարդութեան ազգային ոգիի ջամբումի ճիգին մէջ.
 - ♦ ՀՄԼՄ-ը այսօր եւ վաղը.
 - ♦ ՀՄԼՄ-ի գաղափարաբանութիւնը.
 - ♦ ՀՄԼՄ-ի պատմութիւնը, կառույցը եւ միութենական հասկացողութիւնը.
 - ♦ Ժողովական եւ վարչագիտական ծանօթութիւններ, փոքրօրբային հասկացողութիւններ.
 - ♦ ՀՄԼՄ-ականի տիպարը եւ արժէքները.
 - ♦ Ազգային դաստիարակութիւն, կրօն, մշակոյթ եւ արժէքներ.
 - ♦ Ի՞նչպէս ղեկավարել միութիւն մը.



Դասախօսական նիւթերու եւ սեմինարներու կողքին, կ'արժէ նաեւ կազմակերպել կլոր սեղաններ՝ շրջանը յուզող հարցերու քննութեան եւ մանաւանդ շրջանի երիտասարդութեան ակնկալութիւններուն ու մտահոգութիւններուն ծանօթանալու համար:

Բ. ՍԿԱՌՏԱԿԱՆ

Սկստակական բնագաւառը կ'ենթադրէ ազգային եւ սկստակական գիտելիքներու համապարփակ ծրագրի մշակում, խմբապետներու վերաորակաւորում, նոր տարրերու ներգրաւում եւ միջ-մասնաճիւղային բանակումներու կազմակերպման աշխատանքներու ծանօթութիւն:

Յատուկ աշխատանք պէտք է տանիլ փոքրեր ներգրաւելու եւ սկստակութիւնը անոնց սիրցնելու համար: Այս նպատակով, կ'առաջադրուի կազմակերպել տարեկան սեմինարներ, որոնց արդիւնքներուն լոյսին տակ պիտի առնուին համապատասխան քայլեր:

Գ. ՄԱՐՉԱԿԱՆ

Մարզական բնագաւառը օրէ օր կը զարգանայ եւ բազմա-

ճիւղ կը դառնայ: Հ.Մ.Ը.Մ-ը պարտաւոր է քայլ պահել օրուան նորութիւններուն հետ եւ քննել նոր մարզախաղեր կիրարկելու կարելիութիւնը (պատմութիւն, լող, ֆութպոլ՝ աղջկանց համար եւ այլն): Միաժամանակ, ան պէտք է աշխատանք տանի քանի մը այլ ուղղութիւններով:-

●Մարզիկներու մասնագիտական բնոյթի սեմինարներու կազմակերպում:

●Միջ-մասնաճիւղային մարզախաղերու թիւի եւ մասնակիցներու որակի բարելաւում:

●Նոր մարզախաղերու կանոնագրութիւններու մշակում:

●Մարզական ֆետերասիոններու հետ գործակցութիւններու մշակում:

Գ. ԿԱԶՄԱԿԵՐՊՉԱԿԱՆ

Միութեան Տրդ Պատգամաւորական Ժողովին կողմէ հռչակուած «Կազմակերպչական քառամեակ»ի կարեւորութեան գիտակցութեամբ, եռամեայ ծրագիրը կը նախատեսէ հետեւեալ աշխատանքները:-



◆Շրջաններու անդամական ցանկերու բիւրեղացում:

◆Գոյուլթիւն ունեցող գոյքերու եւ մարզասրահներու բարելաւում:

◆Դասախօսութիւններու եւ մասնագիտական սեմինարներու մասնակիցներու զնահատագիւրներու բաշխում:

◆«Մաքուր խաղ»ի (fair play) ծրագրի մշակում:

◆Մարզիկներու յատուկ օրինագիրքի մը պատրաստութիւն:

◆«Մարզիկ» պաշտօնաթերթի բաժանորդներու թիւի յաւելում եւ նիւթական աղբիւրներու որոնում:

◆Համացանցի կայքէջի տեւական ճոխացում եւ արդիակաւնացում:

Տեղին է նշել, որ ծրագիրը իր 23 էջերով մանրամասնօրէն կը նախատեսէ իւրաքանչիւր բաժանումի (վարչական, սկսողական, մարզական, կազմակերպչական) պարագային առնչուելիք քայլերը, համապատասխան թուականներով եւ այդ քայլերու պատասխանատուներուն ճշգրտումով:

(Շար. 2 եւ վերջ)

ARMENIA

for private and group trips

www.saberatours.fr

- Direct Flights
PARIS
YEREVAN
PARIS
- Select your Journey
- Guided Tours for 8 Days or 12 Days

Saberatours Sevan Voyages

WITH THE COLLABORATION OF THE NEW AIRLINE COMPANY

Armavia
Արմավիա

Photos: © Yarm Arpiuş-Berriatou, Ferre via du Ciel, Licence 075 960031, Smau/ACM 009 1605

11, rue des Pyramides
75001 Paris
tel 331 42 96 10 10
fax 331 42 96 18 77
saberatours@selectour.com

48, cours de la Liberté
69003 Lyon
tel 334 78 60 13 66
fax 334 78 60 92 26
sevan@selectour.com

67, La Canebière
13001 Marseille
tel 334 95 09 30 60
fax 334 95 09 30 61
marseille@wasteels.fr

32-38, rue Hanrabedoutian
Yerevan
tel 374 10 52 55 55
fax 374 10 56 40 30
sabera@arminco.com

Հ.Մ.Ը.Մ.Ի ԼԻԲԱՆԱՆԻ ՖՈՒԹՊՈՒԼԻ ԽՈՒՄԲԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹԻՒՆԸ՝ ԱՄԻՈՅ 1970Ի ԱԽՈՅԵԱՆ ԽՈՒՄԲԵՐՈՒ ԱԽՈՅԵԱՆՈՒԹԵԱՆ

(Դ. ՄԱՍ)

**Տոթթ. Միսաք Արզումանեան
ՍԱՆ ԽՈՒՄԵ**

Գ. Նախորդ թիւին մէջ յիշած էի, որ մեր մասնակցութիւնը ասիական խաղերու աւարտական մրցաշարքին, կարելի դարձաւ շնորհիւ «Արարատ» Մարզամշակութային Միութեան կողմէ եղած երախտարժան յանձնառութեան մը:

Օրը հասաւ եւ միջ-հայկական Փութպոլի մրցումը տեղի ունեցաւ եղբայրական օրինակելի մթնոլորտի մէջ, ու Հ.Մ.Ը.Մ.-ը մէկ կող արձանագրելով յաղթանակ տարաւ հիւրընկալ խումբին դէմ:

Խաղին ամբողջ տեւողութեան, պարտուելու մտահոգութեամբ հետեւած էինք ընթացքին: Բայց նոյն օրը երեկոյեան իսկ, տեղական մամուլը գրած էր.- «Լիբանանեան խումբը խնայեց «Արարատ»ի իր եղբայրներուն...»:

Բացարձակ անճիշդ արժեւորում մը, որ արդիւնքն էր մեր խումբին այլապէս չահած վարկին ու համակրանքին:

Դ. Յիշենք, որ գիշեր մը անակնկալօրէն հրաւիրուեցանք «Արարատ»ի պարանջիկ ձեռնարկին եւ իրանահայ երկսեռ երիտասարդութեան ընկերակցութեամբ ու ազգային-գաղափարական ուղղութիւններու նոյնութեան գիտակցութեամբ ստեղծուած հարազատ ու յիշատակելի մթնոլորտին մէջ վայելեցինք իրանեան համադրամ խորտիկներն ու ճաշերը: Ապրեցանք ասպնջական իրանանահայութեան գրկաբաց հոգատարութիւնը: Երախտագիտութեամբ պէտք է արձանագրենք տակաւին, որ եզակի անակնկալ մը ըրին մեզի «Արարատ»ի պատասխանատու քանի մը եղբայրներ: Հրաւիրեցին մեր պատուիրակութիւնը, քաղաքէն դուրս, գեղատեսիլ խաղաղ շրջանի մը մէջ գտնուող, իրենցմէ մէկուն ամառանային նստավայրը (պարտէզ, լողաւազան...) եւ փիթքնիքի մթնոլորտի մը մէջ, իրենց պատրաստած համեղ թացաններով եւ խորովածով արտակարգօէն պատուեցին մեզ: Արտակարգ այո, քանի իրենց հետ բերած էին հայ աշուղ մը, որուն երգն ու նուազը բացառիկ ու անզնահատելի զգացումներով տողորեցին մեզ: Անշուշտ վերյիշեցնելով մեզի մեր անցեալի մշակոյթը, Գողթն գաւառով, տաղասացներու, ժողովրդական երաժշտութեան ու պատմերգութեան դարաշրջանով:

Հաճելի եղաւ նաեւ այնտեղ ծանօթանալ իրանեան բանակի



**Մասնակի հրաւերը եզակի կերպով
ծաղկեցուցած հայ աշուղին հետ:**

հայ սպայ էմիր Յակոբեանին (գնդապետ):

Ձէ՞ որ զգացական ժողովուրդի զաւակ ենք եւ երբ հայ սպայ մը տեսնենք՝ անպայման յուզումնախառն հպարտանք մը կը համակէ մեզ:

Գիտենք որ ոեւէ հայ սպայ, իր նուաճած աստիճանով կը բարձրանայ եւ կը բարձրացնէ հայու անունը, վարկը, նոյնիսկ անգիտակցաբար:

Մեր արժեւորումով, գնդապետը այդպիսին էր ու հաւանաբար առանց Հ.Մ.Ը.Մ.ի շարքերուն պատկանելու, անոր նշանաբանը կենսաւորող մարդ եղած էր:

Ողջերթի երեկոյ «Արարատ»ի հրաւերով: Պաշտօնակա-նութիւն, պատուոյ սեղան, բազմամարդ ներկայութիւն, երգ-երաժշտութիւն, յաւուր պատշաճի սրտի խօսքեր, ամէն ինչ լիբանանահայութեան աւանդութիւններուն համահունչ ու հարազատ:

Պատուոյ սեղանը կը հովանաւորէր գաղութի յարգուած դէմքերէն՝ ազգային-քաղաքական գործիչ, բազմերախտ դեկավար եւ «Արարատ»ի կեդրոնական մարմնի ատենապետ՝ Վաչիկ Ղարաբէկեանը:

Յատուկ բաւարարութեամբ նկատեցինք, որ իր անմիջապէս աջին տեղ տուած էր մեզի: Հետագային առիթ պիտի ունենայինք պատահմամբ հանդիպելու իրեն Լոս Անճելըսի մէջ,

«Ասպարէզ»ի խմբագրատան առջեւ... եւ երկրորդ անգամ դարձեալ սեղանակից պիտի ըլլայինք իրեն, եղբ. Նշան եւ Քոյր Ռուբինա Փիրումեաններու բնակարանը (Կլէնտէյը), Հ.Մ.-Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան ի պատիւ իրենց կողմէ տրուած յատուկ հրաւերին: Պրն. Վաչիկը այդ օրերուն համահայկական պարտականութեամբ մը մաս կը կազմէր «Հաստան Հիմնադրամ»ի հոգաբարձութեան:

Այնտեղ, եղբայրական միջնորդաբան մէջ, խօսքերու բաժնին երբ հասանք, պրն. Ղարաբէկեանը ինձի դառնալով ըսաւ. - «Թեհրանի ողջերթի ճաշկերպին գեղեցիկ խօսքեր ըսիր, տեսնենք հիմա ի՞նչ պատգամ ունիս մեզի տալիք»:

Հաճելի էր անակնկալ այդ պահը: Ու յիշեցի այդ երեկոն, որ ինձի համար եղաւ գաղութի ազգային-գաղափարական-մշակութային կառույցներու ղեկավարներուն հետ ծանօթացման, եւ Հ.Մ.-Ը.Մ.ի եղբայրական ու երախտագիտական զգացումները յայտնելու հրապարակային առիթ:

Արդարեւ, միջ-հայկական խրախճանքի, երգի, երաժշտութեան հայաբոյր միջնորդութիւն մէջ, սրտի խօսք բանաձեւելու հերթը երբ տրուեցաւ ինձի, դժուար չեղաւ ըսել. -

«Եկանք, տեսանք, եւ որովհետեւ կայսր կամ զօրավար չենք, սիրեցինք...»:

Անդադարձանք խումբին օղակայան ժամանումին արժանացած հիւրամեծար ընդունելութեան, եւ մինչեւ ողջերթի օրը մեր վայելած հրաւերներուն: Յիշեցինք յատուկ յայտագիրով մը տեսարժան վայրերու տրուած մեր այցելութիւնները եւ մեր մարզիկներուն հպարտառիթ յաջողութիւնները:

Վերջապէս, «Արարատ»ի նիւթաբարոյական յանձնառութեամբ սկսած, ու այդ գիշեր շքեղ խրախճանքով մը եզրափակուող երկշաբաթեայ այցելութիւնը ըստ արժանւոյն ընդգծելով յայտնեցինք մեր երախտագիտութիւնը ու եզրակացուցինք. -



Լիբանան վերադարձէն ետք, Հ.Մ.-Ը.Մ.ի Երջանային Վարչութեան անդամներու եւ այլ եղբայրներու հետ:



Հ.Մ.-Ը.Մ.ի պատուիրակութիւնը Թեհրանի քաղաքապետին հետ:

«Սիրեցինք Թեհրանը, «Սիրեցինք Թեհրանի մարգասէր հասարակութեան ու ղեկավար դասուն համակրական վարքագիծը:

«Սիրեցինք յատկապէս գաղափարակից «Արարատ»ի մարզիկներն ու ղեկավարութեան ոգեւորող աջակցութիւնը»:

Այդ օր Թեհրանի մեր յուշերուն էջը փակուեցաւ: Չենք կրնար, սակայն, Թեհրանի մեր երթին յուշագրութիւնը ամբողջական նկատել, առանց ոգեկոչելու յիշատակը ազնուական եղբօր մը, որուն ծանօթացանք այնտեղ: Ան եղած է «Արարատ»ի ղեկավարներէն, եղած է պետական եւ ազգային երեսփոխան, արժանացած է շքանշաններու, եւ պարագաներու բերումով Լոս Անճելըս հաստատուելէ ետք, մաս կազմած է Հ.Մ.-Ը.Մ.ի Արեւմտեան շրջանին եւ ատենապետած անոր:

Այս բոլորով իր մէջ տեսանք «խոնարհ հերոս»ի կենցաղավար պատկերով՝ «ազգային ծառան»: Մրցաշարքի ամբողջ տեւողութեան, Թեհրանահայ պատասխանատուներէն եղաւ միակը, որ ամէն առաւօտ պանդոկ այցելեց, մարզիկներուն որպիսութիւնը ստուգեց, օրուան յայտագիրը ուզեց գիտնալ, եւ խումբին տրամադրուած հանրակառքը ճամբայ հանելէ ետք, անձայն անհետացաւ:

Մերձաւոր Արեւելեան մեր երկիրներուն մէջ նման հայ երեսփոխանի մը չէինք հանդիպած: Այդքան համեստութիւն գարմացուց մեզ եւ այդքան անձնուիրութիւն բնականաբար գինք արժանացուցին մեր բոլորին յարգալիր գնահատանքին:

Այդ եղբայրը այժմ մահացած եղբ. Սեւակ Սափինեանն էր, որ մեզի համար պիտի մնայ տիպար Հ.Մ.-Ը.Մ.ականը, օրինակելի միութենականը, հազուադիւր եւ իրաւ մարդը, բազմերախտ իրանահայը:

Յարգանք իր յիշատակին:

(Վերջ)

Հ.Մ.Ը.Մ.ԱԿԱՆ ՄԱՐԶԻԿԻՆ ՏԱՄՆԱԲԱՆԵԱՆ

- Ա. -



«Հ.Մ.Ը.Մ.ի դաստիարակչական ուղեցոյց»ը միութենական կարեւոր հրատարակութիւն մըն է, որ քանի մը ամիսէ ի վեր կը գտնուի հրատարակի վրայ:

«Ուղեցոյց»ին ամէնէն ուշագրաւ բաժիններէն մէկն է Հ.Մ.Ը.Մ.ական մարզիկին փաստաբանեան, որուն մտադրացման եւ պատրաստութեան մէջ մեծ դեր ունին վաստակաւոր երկու եղբայրներ՝ Արա Յակոբեան (Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան նախկին անդամ) եւ Պեպրոս Շեմմեւեան (Հ.Մ.Ը.Մ.ի Լիբանանի Շրջանային Վարչութեան երկարամեայ անդամ եւ արեւնապետ):

Տասնաբանեան, առաջին անգամ ըլլալով կը բանաչեւ Հ.Մ.Ը.Մ.ական մարզիկին հաւաքոյ հանգանակը եւ առ այդ արժանի է լայն բացատրութեան: Այս խի պատճառով «Մարզիկ» դիմեց փաստաբանեայի հեղինակներէն եղբ. Պեպրոս Շեմմեւեանին, որպէսզի յաջորդաբար ներկայացնէ անոր կէտերէն իւրաքանչիւրը:

«Մարզիկ»ի դիմումը անպատասխան չմնաց եւ ահա, այս քիւէն սկսեալ, մեր ընթերցողները առիթը կ'ունենան ծանօթանալու փաստաբանեային պատրաստութեան եփին կանգնող մտահոգութիւններուն եւ առաջադրանքներուն:

Պեպրոս Շեմմեւեան ՊԷՅՐՈՒԹ

«1. Հաւատարիմ է Հ.Մ.Ը.Մ.ի «Բարձրացի՛ր բարձրացուր» նշանաբանին: Ան պատրաստ է անսակարկ եւ հաւատարմօրէն ծառայել ազգին ու հայրենիքին»:

Արդար եւ տեղին է Հ.Մ.Ը.Մ.ական մարզիկին տասնաբանեան սկսիլ «Բարձրացի՛ր բարձրացուր»ով, որովհետեւ Հ.Մ.Ը.Մ.ական մարզիկը երբ մարզական աշխարհ մտնուք գործէ, պէտք է ի մտի ունենայ սորվիլ եւ բարձրանալ: Պատգամը յստակ է, նախ՝ բարձրանալ: Ասիկա անձնասիրութիւնն է, այլ ընդհակառակը՝ պարտաւորութիւն: Բարձրացնելու հա-



մար նախ պէտք է ենթական բարձր ըլլայ, պատրաստ՝ բարձրացնելու: Այս ոգին տիրական պիտի ըլլայ իր մէջը, ըլլայ դպրոցին, գործին, միութեան թէ մարզադաշտին մէջ: Բարձրանալէ ետքն է կամ բարձրանալու ընթացքին մէջ եղողն է միայն, որ կրնայ բարձրացնել ուրիշը եւ ծառայել ազգին ու հայրենիքին:

Հ.Մ.Ը.Մ.ական մարզիկը կրկնակի նպատակ ունի մարզական իր կեանքին մէջ. նուաճել մարզական յաղթանակներ եւ միշտ պատրաստ՝ անսակարկ եւ հաւատարմօրէն ծառայել ազգին: Արդ, երբ ան նուաճած է մարզական որեւէ բարձունք, ան պատրաստ է բարձրացնելու իրմէ ստորադասները: Այս հանգրուանին ան պիտի տայ իր միութեան եւ ուրիշներուն անսակարկ, առանց նիւթական կամ բարոյական վարձատրութեան ակնկալութեան, որովհետեւ ինք եւս նոյն ձեւով ստացած եւ բարձրացած է:


Թերեւս գտնուին միամիտներ կամ բարեմիտներ, որոնք պահ մը մտածեն թէ մարզականը ի՞նչ կապ կրնայ ունե-

նալ ազգին ու հայրենիքին հետ: Կը բաւէ որ մարզիկ մը կարեւոր դիրքեր գրաւէ, մրցանիշներ հաստատէ եւ արդէն իրագործած կ'ըլլայ իր եւ շրջապատին երազը, նպատակը: Այսօր պետութիւններ հսկայական գումարներ կը ծախսեն իրենց մարզիկներուն վրայ, որ պէսզի մարզական միջազգային մրցումներու կամ ողիմպիականներու իրենց դրօշը բարձրանայ, քայրերգը նուագուի եւ միլիոնաւոր հայրենակիցներու սրտերը թունդ-թունդ ելլեն: Երբ այս է իրականութիւնը աշխարհի մեծ ու փոքր ժողովուրդներուն համար, ի՞նչ ըսել հայ ժողովուրդի պարագային: Հ.Մ.Ը.Մ.ական մարզիկը բոլորանուէր հաւատքով պէտք է ծառայէ ազգին եւ հայրենիքին, թէ՛ իր մարզական նուաճումներով եւ թէ՛ իր անձնական կեանքով, որովհետեւ հայ ազգը «օդի եւ ջուրի պէս պէտք ունի յաղթանակի հպարտանքին», ինչպէս կը պատգամէ Վահան Թէքէեան:

Դժբախտաբար, մեր պատմութիւնը ծանրաբեռնուած է կոտորածներով եւ պարտութիւններով: Քիչ են ազգային հպարտանք ներշնչող յաղթանակներն ու ազատագրական պայքարները: Վերջինը Ար-



ցախեան գոյամարտն էր: Հ.Մ.Ը.Մ.ական մարզիկն է որ իր յաղթանակներով պիտի ծառայէ ազգին ու հայրենիքին:



- Full of Charme Hotel, New Construction, French Architecture, International Standards, 100 m from the Republic Square and 15 minutes from the Yerevan International Airport.
- 44 Rooms and 3 Suites with all comforts, all climate controlled, minibar, shower or bathroom with private WC, hairdryer. Satellite TV, international direct dial phone. Internet & Email access.
- Individualized and personal service, 24 hour reception and room service
- Bar



Feel at home, away from home...

Yerevan
32-38, Hanrabadoutian Street,
Yerevan 375010, Armenia
Tel 374 10 54 60 60 • Fax 374 10 54 60 50
sales@europehotel.am

www.europehotel.am



ՄԱՐՉԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆ

Ս. Ա.
ՊԷՅՐՈՒԹ

3000 տարի առաջ Յունաստանի մէջ տեղի ունեցած ողիմպիական խաղերուն մարզիկները կրնային միայն իրենց ուժին ապահովել արդիւնքներու հասնելը:

Այսօր, սակայն, միայն ձիրք, քաջութիւն եւ ուժ բաւարար չեն միջազգային մարզական աստղեր դառնալու համար:

Մարզիկներ այնքան իրարու մօտ արդիւնքներ կրնան ձեռք ձգել, որ անոնց միջեւ նուազագոյն տարբերութիւնը կրնայ ոսկի մետալի եւ բնաւ մետալ չունենալու տարբերութիւն ըլլալ:

Այս պատճառով ալ մարզական գիտութիւնը դարձած է չափազանց կարեւոր՝ ընտրանի մարզիկներ եւ անոնց անհրաժեշտ կազմածները պատրաստելու համար:

Մարզական հարցերով զբաղող գիտնականները կ'օգտագործեն նորագոյն հետազօտութիւններն ու արհեստագիտութիւնը՝ իրենց մարզիկներուն յաջողութիւն ապահովելու համար:



Ամէն ինչ՝ իրենց մկաններու մանրաթելերէն մինչեւ իրենց ուղեղներուն բջիջները, կ'ենթարկուի մարզումներու խիստ յայտագիրի մը, ապահովելու համար, որ մրցումին օրը անոնք կատարելապէս պատրաստ մարմնով եւ կեդրոնացած մտքով մասնակցին խաղերուն:

Տարիներէ ի վեր եթէ մրցանիչներ կը շարունակւին կտրուիլ, պատճառը, ըստ մասնագէտներու մեծամասնութեան, մարզական գիտութիւններու արձանագրած հսկայ յառաջդիմութիւնն է մէկ կողմէ, ինչ որ մղած է մարմինը եւ միտքը աւելի լաւ ըմբռնելու, իսկ գործածուող սարքերուն բարելաւումն է միւս կողմէ:

ՄԱՐՉԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԵԱՆ ՉՈՐՍ ՄԱՐՉԵՐԸ

Մարզական գիտութեան չորս մարզերն են՝ կենսամեքենայութիւնը, բնախօսու-

թիւնը, հոգեբանութիւնը եւ արհեստագիտութիւնը:

Կենսամեքենայութիւնը այն գիտութիւնն է, որ ճարտարագիտական սկզբունքներ կը կիրարկէ մարմինին շարժումներուն վրայ:

Այս մարզի մասնագէտները կ'ուսումնասիրեն մարզիկի մը շարժումները, օգտագործելով վիտեօ, շարժում հետապնդող եւ ուժ չափող սարքեր, ինչպէս նաեւ՝ սարքեր, որոնք մկանին երկտրական գործունէութիւնը կը չափեն եւ մարմինին վրայ ներքին եւ արտաքին ուժերուն ազդեցութիւնը կը գնահատեն:

Համակարգչային մոտելներու կամ վիտեոներու օգտագործումով, մասնագէտը կրնայ բացատրել, թէ ի՞նչպէս թեքնիքի փոփոխութիւն մը կրնայ թափ տալ կատարողութեան:

Բրիտանացի մասնագէտ տղթ. Նիլ Ֆաուլըր որ Ման-

չեսթըր Մեթրոփոլիթըն համալսարանին դասախօսներէն է եւ Բրիտանական Մարզական Գիտութեանց Ընկերակցութեան տնօրէնը, կ'ըսէ, թէ ընտրանի մարզիկի մը եւ պարզ մահկանացուի մը միջեւ տարբերութիւնը «մէկ շարժումին եւ միւս շարժումին միջեւ ճիշդ ժամանակն է (թայմինկ)»:


Կենսամեքենայութեանն առաւելագոյնը օգտուելու համար, մարզիկը պէտք է Ֆիզիքապէս կարողութիւնը ունենայ իրեն թելադրուած փոփոխութիւնները կատարել:

Հոս է, որ բնախօսութիւնը դերակատար է: Բնախօսներ յաճախ սերտօրէն կը գործեն կենսամեքենագէտներու հետ՝ «գոցելու» համար բնախօսական բացեր, որոնք յաջողութեան եւ ճախողութեան միջեւ տարբերութիւն կ'ընեն:

Բնախօսներ կը չափեն եւ կ'ուսումնասիրեն մարմինին Ֆիզիքական եւ քիմիագիտական գործընթացները: Սակայն անոնց չափածները կը տարբերին մէկ մարզանքէ միւսը:

Վազքի նման մարզանքի մը պարագային, օրինակ, առաջնահերթութիւններէն մէկը մկաններուն բաւարար թիւում չունենալն է, որ պէտք է անոնք կարենան օդի օգտագործումով առաւելագոյն չափով գործել:

Երբ մարմինը կը հասնի այն հանգուանին, ուր առաւելագոյն չափով կրնայ թիւում չունենալ օգտագործել, մկանները կը սկսին առանց





թիվում լաքսիք թիվում, որ մկանային յոգնություն կը պատճառէ:

Բնախօսներ այս բոլորը ի մտի ունենալով է, որ կը փորձեն օժանդակել նման մարդկաներու:

Խմբային մարզախաղերու պարագային, բնախօսական պահանջները կը տարբերին համաձայն իւրաքանչիւր խաղացողի դիրքին (խաղին ընթացքին):

«Օրինակ, գիտենք թէ Ֆուլթայոյ պարագային, միջնապահ դիրքի վրայ խաղացողը 90 վայրկեան մրցումի մը տեւողութեան շուրջ 11 քմ. կը վազէ, հետեւաբար թիվում կրելու եւ օգտագործելու անոր կարողականութիւնը կարելոր է», կ'ըսէ Մարգարէ Անգլիական Հիմ-

նարկին մարզական գիտութիւնները համակարգող, բնախօսութեան մասնագէտ՝ տոքթ. Կրէյկ Ուայթ:

Տկարութիւնները գտնելէ ետք, «աւելի խելացի ձեւով» մարզուիին է հարցը, կը յայտնեն մասնագէտներ:

Սակայն, հակառակ վերոնշեալ բոլոր աշխատանքներուն, կը թուի, թէ մարդկային մարմինը ունի որոշ սահման մը, որմէ անդին չի կրնար երթալ, բացի եթէ ան օգտագործէ բարեփոխում, գերարդիական սարքեր:

Արդարեւ, ներկայիս մարդիկ մը յաջողութեան իւրաքանչիւր մասը կ'օգտուի նոր արհեստագիտութենէ մը: Անիկա նոյնիսկ պարտադրաբար «սանձուած է», մարգարէն ապահով պահելու համար: Ինքնաշարժներու եւ

մոթորսիքլէթներու առաւելագոյն արագութիւնները սահմանափակուած են, իսկ երկար նիզակները շինուած են այնպիսի ձեւով մը, որ անոնք հանդիսատեսներու չհասնին՝ երբ նետուին:

Սակայն, նոյնիսկ կատարեալ մարմինով եւ լաւագոյն սարքերով, մարդիկ մը միտքը կրնայ մրցումին օրը զայն լքել:

Մարզական հոգեբանութիւնը մարզական յաջողութեան կապուած հոգեբանական ազդակներու ուսումնասիրութիւնն է: Անոր նպատակն է բարելաւել կատարուած աշխատանքը, մշակելով միջոցներ՝ յաղթահարելու համար սթրեսը, կասկածը, ապակեղրոնացումը եւ առաւելագոյն չափով օգտագործելու համար «մտային գրական

կեցուածքը», որ յաջողութեան կրնայ առաջնորդել:

Հետեւաբար, պէտք է մոռնալ, որ իւրաքանչիւր մարդիկի, մանաւանդ ընտրանի մարդիկի ետեւ կայ գիտնականներու ամբողջ խմբակ մը, որուն անդամները վճռած են յաղթահարել ծիները, ջիղերը եւ նոյնիսկ բնութեան կապուած խոչընդոտները, զայն աշխարհի լաւագոյնը դարձնելու համար:

Ինչ կը վերաբերի ապագային, մարզական գիտութեան բանալի բառը երկուսու միքսն է, այսինքն՝ մղել մարդիկներն ու անոնց սարքերը, որ կատարեալ ներդաշնակութեամբ գործեն, զանոնք աւելի արագ եւ արդիւնաւէտ դարձնելու համար:

(Աղբիւր՝ «Ֆորթս»)



Philippe Photo Trade

Philippe Photo Trade

- Audio / Video Production / Post Production Systems
- Liner / Non-Liner Editing Systems
- Data / Video Large Screen Projection Systems
- Audio / Video Systems for Professional Application
- Conferencing / Simultaneous Translation Systems
- Language Labs & Conventional Training Aids Systems

EXPERTS IN AUDIO-VISUAL SYSTEMS INTEGRATION AND TOTAL CONTROL APPLICATION

Head Office: 1(a) Mesaha St., Orman Sq., Dokki, Zip Code: 12311 A.R. Egypt.
Tel: 7491350 (8Lines) Fax: 7481069 E-mail: philippe@ritsec2.com.eg


Alex. Branch: 33 Sidi El-Metwally St., El-Attarin / Alexandria
Tel: (03)4916017 Fax: (03)4923051 E-mail: philippe@ritsec2.com.eg

Philippe Photo Trade

Assadourian Bros.



ՀՈՂԻ ՄԱՇՈՒՄԸ



Ալին Չէյթունյեան
ՊԷՅՐՈՒԹ

Կենսոլորտի դիմագրաւած կարեւոր հարցերէն մէկն է մարդոց կողմէ հողին հասցունած վնասը: Նախնական դարերուն, մարդիկ կ'ապրէին որսորդութեամբ եւ երկրագործութեամբ, որոնց շնորհիւ անոնք կը հայթայթէին իրենց ընտանիքներուն ուտելիքը: Քաղաքակրթութեան զարգացումով մարդիկ կարիքը զգացին մեծ արօտափայրերու, իրենց կենդանիները արածելու եւ մեծ քանակով ցանքեր հասցնելու համար: Այս երկուքն ալ կը պահանջէին հողամասերու «մաքրագործում», որուն

հետեւանքով երկրի կարգ մը շրջաններուն տեսքը փոխուեցաւ: Նորանոր զարգացումներով, հողամասերու պահանջը աւելցաւ պեղումներու, հանքագործութեան եւ յաւելեալ հողամշակութեան համար:



Յիշեալ փոփոխութիւնները տեղի ունեցան գրեթէ անտեսելով կենսոլորտի վնասները:

ՀՈՂԻ ՄԱՇՈՒՄԸ

Հողի մաշումի համար կան երկու պատճառներ՝ հողը եւ ջուրը:

Հովի հետեւանքով, երկիրը ծածկող հողը կը փոխադրուի հեռու վայրեր, երբեմն՝ մինչեւ ծով:

Այսպիսի մաշում մը մտահոգիչ է, մասնաւորաբար շատ չոր կլիմայով շրջաններու համար, ուր արդէն անտառները փճացած են: Ծառերու եւ թուփերու արմատները մեծ դեր ունին հողը բռնելու կամ պահպանելու համար: Երբ ծառերը արմատախիլ ըլլան՝ հողը ենթակայ կ'ըլլայ հովի եւ ջուրի ազդեցութիւններուն:

Երբ երկրի հողը պակսի՝ ցանքերը դժուար թէ աճին: Հողը կը դադրի բերրի ըլլալէ: Հողի փոխադրութիւնը կը կատարուի բնական միջոցներով, ինչ որ հազարաւոր տարիներու կը կարօտի: Շատ չոր ցամաքամասերու եւ երկիրներու մէջ, հողի մաշումը մեծ հարց է: Ծառերու, թուփերու եւ խոտերու ոչնչացման պատճառով, հողը դիւրութեամբ կը սահի, անձրեւի նուազագոյն քանակէն իսկ: Ծառեր եւ թուփեր ցանելով մենք պահպանած կ'ըլլանք երկիրը ծածկող հողը:

Երբ երկրի հողը պակսի՝ ցանքերը դժուար թէ աճին: Հողը կը դադրի բերրի ըլլալէ: Հողի փոխադրութիւնը կը կատարուի բնական միջոցներով, ինչ որ հազարաւոր տարիներու կը կարօտի: Շատ չոր ցամաքամասերու եւ երկիրներու մէջ, հողի մաշումը մեծ հարց է: Ծառերու, թուփերու եւ խոտերու ոչնչացման պատճառով, հողը դիւրութեամբ կը սահի, անձրեւի նուազագոյն քանակէն իսկ: Ծառեր եւ թուփեր ցանելով մենք պահպանած կ'ըլլանք երկիրը ծածկող հողը:

Կայ նաեւ այլ հարց մը: Խաշնարածութիւնը շատ կարեւոր է երկրի տնտեսութեան համար: Միւս կողմէ, սակայն, հովիւները եւ ագարակապանները կարգ մը շրջաններու մէջ չափազանց շատ կ'արածեն իրենց նախիրները, հետեւաբար հողի եւ ջուրի սպառումը շատ դէժ ձեւով կ'ըլլայ: Առանց խոտի, հովին ու ջուրը երկրի հողը կ'առնեն եւ հեռու տեղեր կը տանին: Կրծող կենդանիները, ինչպէս՝ նապաս-



տակները, այծերը, խոզերը եւ գոմէշները այս պարագային մեծ վնասներ կը հասցնեն:

ԱՂԻ ՉԱՓԱՋԱՆՑ ԲԱՐՉՐ ՔԱՆԱԿԸ

Ընդհանրապէս կ'անդրադառնանք հողին, գետերուն, լիճերուն եւ առուակներուն մէջ գտնուող աղի քանակին: Չոր կլիմաներու մէջ, աղին քանակը կը բարձրանայ արդի հողամշակութեան եւ նաեւ՝ մեքենական յառաջդիմութեան պատ-

ճառով: Վերջին 100 տարիներուն, բնական բուսականութեան փճացումը եւ տեւական հողամշակութիւնը երկրի հողին մէջ գտնուող աղին քանակը կ'աւելցնեն:

Երկրագունդի կարգ մը շրջաններու հողը այլեւս դարձած է չափազանց աղի, այնքան մը որ յիշեալ շրջանները այլեւս ցանքի եւ արօտավայրի համար օգտագործելի չեն:

ԼՈՒԾՈՒՄԸ

Այս բոլոր հարցերուն հիմնական պատճառը բնական բուսականութեան փճացումն է, մարդոց տարբեր աշխատանքներուն տեղ տալու համար: Հողի տարածքներ ապահովելու համար, անոնց համար աւելի դիւրին եւ աժան է ամբողջութեամբ ծառեր արմատախիլ ընելը: Վերջին, տասնամեակներուն միայն հողագործները կ'անդրադառնան այս հարցին:

Լաւագոյն լուծումը, հետեւաբար, նոր ծառեր տնկելն է, որովհետեւ ծառերը կը նպաստեն որ հողի տարբեր մասեր իրարու բռնեն, ստորգետնեայ ջուրի պաշարներուն մէջ աղի քանակը ցած պահելով:

The Champs Élysées just steps away and the Parc Monceau nearby

HOTEL

★ ★ ★

PAVILLON MONCEAU

PARIS

Full of charme,
Tastefully decorated 36 rooms and 6 suites with individual heating/air conditioning, direct access telephone line, internet connection, minibar, safety box and satellite TV. Private bathroom with hairdryer.
The suites can accommodate 3 adults or a family with parents and 2 children.

43 rue Jouffroy d'Abbans 75017 Paris
Tel 331 56 79 25 00 - Fax 331 42 12 99 38
infos@pavillon-monceau.com
www.pavillon-monceau.com



Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.Ի ՄԻՋ-ՄԱՐԶԱՅԻՆ ԲԱՆԱԿՈՒՄԸ՝ ԲԻՒՐԱԿԱՆԻ ՄԷՋ

Թղթակից ԵՐԵՒԱՆ

12-18 Օգոստոս 2005, Բիւրականի բանակավայրին մէջ տեղի ունեցաւ Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ-ի միջ-մարզային բանակումը, մասնակցութեամբ՝ Երեւանի, Մասիսի, Աբովեանի, Հրազդանի, Չարենցաւանի եւ «Վարդան Բախչեան» միաւորներէն սկաուտներու:



պաշտպանուելու անհրաժեշտութեան: Այնուհետեւ, սկաուտները ճաշակեցին օրհնուած խաղողը:

Նոյն օրը, արշաւին մասնակիցներուն ներկայացուեցաւ երկրորդ դասախօսութիւն մը, նիւթ ունենալով Ամբերդի պատմութիւնը՝ կառուցումէն մինչեւ մեր օրերը: Օրւան աշխատանքները իրենց արձագանգը գտան հանրային պատկերասփիւռի «Հայրեր»ի հաղորդումէն:

Բանակումը կ'առաջադրէր տարւան ընթացքին փոխանցուած տեսական գիտելիքները ամրապնդել գործնական աշխատանքներով, նաեւ առիթ ընծայել տարբեր շրջաններու սկաուտներու՝ իրարու ծանօթանալու:

Բանակումին յայտագիրը ճոխ էր եւ ալյազան. ձեռային աշխատանքներու պատրաստութիւն, զարգացման եւ մարզական մրցումներ, ազգային եւ սկաուտական նիւթերով դասախօսու-

թիւններ եւ այլն:

Օգոստոս 17ին, Աստուածածնայ վերափոխման տօնին առիթով, քայլարշաւ մը կատարուեցաւ դէպի Ամբերդ, ուր Երեւանի Մ. Սարգիս եկեղեցւոյ հետ նախօրոք եղած կարգադրութեան մը շնորհիւ, մատուցուեցաւ Պատարագ եւ կատարուեցաւ խաղողօրհնէք:

Պատարագէն ետք, Տէր Գրիգոր Քահանայ դասախօսութիւն մը ներկայացուց Հայց Առաքելական եկեղեցւոյ մասին եւ անդրադարձաւ աղանդներէ

Բանակումը ընդգրկեց նաեւ այլ արշաւ մը, որուն ընթացքին ըսկաուտները ծանօթացան բնապահպանման հարցերու եւ միջավայրի պահպանման ձեւերու:

Փակման արարողութիւնը տեղի ունեցաւ Օգոստոս 15ին, ներկայութեամբ Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ-ի Կեդրոնական Վարչութեան ատենապետ եղբ. Հրաչ Շմաւոնեանի, Հ.Մ.Ը.Մ.ի Հայաստանի կազմակերպչութեան հիմնադիրներէն եղբ. Մանուկ Մանուկեանի եւ այլ հիւրերու:

«ՃՍՏԻԿ-ՊՍՏԻԿ, Հ.Ա.Ս.Կ.Ի ԳԱՅԼԻԿ»



Թղթակից ԵՐԵՒԱՆ

20-26 Օգոստոս 2005 տեղի ունեցաւ Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ-ի Համահայաստանեան գայլիկական բանակումը, որուն մասնակցեցան Երեւանի, Վանաձորի, Աբովեանի, Չարենցաւանի եւ «Վարդան Բախչեան» միաւորներէն 50 գայլիկներ եւ 17 պատաս-

խանատուներ: Բանակումին նշանաբանն էր «Ճստիկ-պստիկ, Հ.Ա.Ս.Կ-ի գայլիկ»:

Բանակումին ընթացքին տեղի ունեցաւ միօրեայ արշաւ, որուն մասնակիցները գործնապէս կիրարկեցին օր մը առաջ իրենց սերտած հետախուզական նշանները: Արշաւին օրը գայլիկներուն ներկայացուեցաւ «Հայրենի բնաշխարհ» նիւթով դասախօսութիւնը: Անոնք սորվեցան նոր կանչեր, երգեր եւ խաղացին խաղեր:

Բանակումին երկօրեայ յայտագիրները ընդգրկեցին բազմատեսակ ձեռային աշխատանքներու պատրաստութիւններ, գայլիկական եւ ազգային նիւթերով դասախօսութիւններ եւ մարզական մրցումներ:

Փակման հանդիսաւոր արարողութեան, Օգոստոս 25ին, ներկայ գտնուեցան Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ-ի Կեդրոնական Վարչութեան անդամներ, ծնողներ, Երեւանի միաւորի երէցական փաղանգի անդամներ եւ հիւրեր:



Հ.Մ.Ը.Մ.Ի ԵՐՈՒՍԱՂԷՄԻ ՄԱՍՆԱԾԻՂԻՆ ՍԿԱՌՈՒՏԱԿԱՆ 37ՐԴ ԲԱՆԱԿՈՒՄԸ ՆՈՒԻՐՈՒԱԾ ՄԱՍՆԱԾԻՂԻՆ ՀԻՄՆԱԳՐՈՒԹԵԱՆ 70ԱՄԵԱԿԻՆ

Բանակումը նուիրուեցաւ մասնաճիւղին հիմնադրութեան 70ամեակին, հետեւաբար, մասնաճիւղին վարչութեան հետ համախորհուրդ, Սկառուական Խորհուրդը որոշեց բանակումին մասնակիցները բաժնել խումբերու եւ գանոնք անլանել մասնաճիւղի պատմութեան մէջ իրենց դրոշմը ձգած անդամներու եւ համակիրներու անուններով:

Բանակումին մասնակիցները բաժնուեցան երկու խումբի: Մեծերու խումբը, որ կը հագուէր գոց կապոյտ թիշերքներ, կոչուեցաւ «Կարօ Մարտիրոսեան» խումբ: Մեծերու խումբը իր կարգին բաժնուեցաւ չորս խմբակի.- «Գրիգոր Զաքրեան», «Մեսրոպ Երկաթեան», «Գէորգ Սեւան» եւ «Եղուարդ Գայլեան»: Փոքրերու խումբերը կոչուեցան «Յարութ Պէհէնէլեան», «Գասպար Դաւիթեան», «Թազուր Օհաննէսեան» եւ «Միհրան Գրիգորեան»:

Ամբողջ շաբթուան ընթացքին, խումբերը ստանձնեցին բանակավայրի բոլոր աշխատանքները: խոհանոցի եւ բաղնիքի մաքրութիւն, բանակավայրի կարգաւորում, փայտ հաւաքել, երգի փորձ, պահակութիւն եւ այլն: Բանա-

Ամբողջ շաբթուան ընթացքին, խումբերը ստանձնեցին բանակավայրի բոլոր աշխատանքները: խոհանոցի եւ բաղնիքի մաքրութիւն, բանակավայրի կարգաւորում, փայտ հաւաքել, երգի փորձ, պահակութիւն եւ այլն: Բանա-

Յարութ Պաղամեան ԵՐՈՒՍԱՂԷՄ

Հ.Մ.Ը.Մ.ի Երուսաղէմի մասնաճիւղին Սկառուական Խորհուրդը 2005ի իր բանակումը, նուիրուած՝ մասնաճիւղին հիմնադրութեան 70ամեակին, կատարեց 16-22 Յուլիս 2005ին, Լաթրուսի անտառին մէջ: Բանակումին իրենց մասնակցութիւնը բերին Հ.Մ.Ը.Մ.ի Երուսաղէմի, Հայֆայի եւ Եաֆայի մասնաճիւղերէն 65 դայլիկ-սկառուներ:

Ինչպէս անցեալ տարի, այս տարի եւս բանակումին պատասխանատու մարմինը, յանձինս եղբայրներ Բաֆֆի Եղէկէլեանի, Յարութ Պաղամեանի, Ռուբէն Նարպատեանի, Վակիկ Աւետիսեանի ե Գոյր Ազնիւ Հինտոյեանի, երկու ամսուան նախապատրաստական աշխատանքով իր լաւագոյնը կատարեց իրականացնելու համար դաստիարակչական նախատեսուած ծրագիրը:



Փակման հանդիսութեան ներկայ հիւրերը:



կուժին ընթացքին տեղի ունեցան հինգ դասախօսութիւններ՝ նախնական դարձմանում, հայ եկեղեցւոյ, Հ.Մ.Ը.Մ.ի, Հայ Դատի եւ Սուրբ Երկրի մէջ հայերու ներկայութեան մասին: Տեղի ունեցան նաեւ զանազան ձեռնարկներ, պտոյտ՝ դէպի աւագան, ծանօթացում շրջանի սողուն կենդանիներու: Բանակողները խաղացին զանազան խաղեր եւ ունեցան տարբեր մրցումներ:

Տեղին է նշել, որ ինչպէս անցեալ տարի, այս տարի եւս Սկաուտական Խորհուրդը յատուկ շեշտ դրաւ կարգապահութեան, կարգ ու կանոնի վրայ: Մշակուեցան բանակումի յատուկ օրէնքներ, որոնց խախտողներուն սահմանուեցան յարմար պատիժներ:

Բանակումը իր պաշտօնական աւարտին հասաւ փակման հանդիսութեամբ, որ տեղի ունեցաւ Հինգշաբթի, 21 Յունիս 2005ին, ներկայութեամբ Նո-



Երգ ու նուագ՝ փակման հանդիսութեան ընթացքին:

րայր Աբղ. Գազազեանի, Հայաստանի պատուոյ հիւպատոս Յովակ Մոմճեանի, երեք մասնաճիւղերու վարչութիւններու եւ աւելի քան 50 ներկաներու: Փակման հանդէսին տեղի ունեցաւ 5 երգի երգեցողութիւն, ասմունք, Սկաուտական Խորհուրդի կողմէ խօսք (եղբ. Յարութ Պաղամեան), Հ.Մ.Ը.Մ.ի Երուսա-

ղէմի վարչութեան կողմէ խօսք (եղբ. Սերոբ Սահակեան) եւ փակման խօսք (Նորայր Աբղ.):

Փակման հանդիսութեան, սկաուտական շարքեր անցան 8 գայլիկ-արծիւիկներ: Հանդէսը իր աւարտին հասաւ դրօշակի արարողութեամբ եւ «Յառաջ նահատակ» քայլերգի երգեցողութեամբ:

Շաբթուան մը ընթացքին սկաուտները ապրեցան Հ.Մ.Ը.Մ.ական հարազատ միջնորդութիւն մէջ, սորվեցան ըլլալ շարքաշ ու արի, ազգասէր, հայրենասէր, օրինապահ եւ կարգապահ, զարգացողին պարտականութեան իրենց գիտակցութիւնը, պատասխանատուութեան եւ փոխադարձ օգնութեան ոգին: Վերջապէս, շրջանի Հ.Մ.Ը.Մ.ը յաջողեցաւ փայլուն էջ մը եւս աւելցնել 70ամեայ իր պատմագիրքին մէջ:

BDF ●●●●

SUD S.A.L. AGENT EXCLUSIF. Tel: 09-214507/9/10



ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ 30ՐԴ ՄԱՐԶԱԽԱՂԵՐՈՒՆ ՓԱԿՄԱՆ ՇՔԵՂ ՀԱՆԴԻՍՈՒԹԻՒՆԸ

Մարտ Բէշիշեան
ԼՈՍ ԱՆՃԵԼԸՍ

Տարիներու աւանդութեան համաձայն, այս տարի եւս, Միացեալ Նահանգներու անկախութեան տարեդարձին օրը, 4 Յուլիսի յետմիջօրէին, յատուկ հանդիսութեամբ եզրափակուեցան Հ.Մ.Ը.Մ.ի Նաւասարդեան 30րդ մարզախաղերը եւ այդ առիթով կազմակերպուած ձեռնարկները, պատուոյ նախագահութեամբ՝ ծանօթ Հ.Մ.Ը.Մ.ականներ Շանթ եւ Վերթին Հայ-


թականներուն:

Արդարեւ, յետմիջօրէի կանուխ ժամերէն սկսեալ, հազարաւոր հայորդիներ փութացած էին Պըրմինկհամ հայ սքուլի մարզադաշտը, մասնակից դառնալու փակման հանդիսութեան: Ծրագրի պաշտօնական բացումէն առաջ, Սան Ֆեռնանտո հովիտի «Նայիրի» պարախումբը, պարուսոյց Քաթրին Հայրապետեանի գլխաւորութեամբ, ներկայացուց փունջ մը հայկական պարեր:

Կազմակերպիչ յանձնախումբը Նաւասարդեան շապիկներով «հերասիրեց» ներկաները: Նաւասարդեան միջնորդը աւելի խանդավառուեցաւ, երբ

Շրջանային Վարչութեան շեփորախումբը, եղբ. Յարութ Քիրէճեանի ղեկավարութեամբ, ազգային երգեր հնչեցնելով մուտք գործեց մարզադաշտ եւ անգամ մը եւս ոգեւորելով ներկաները, իր տեղը գրաւեց մարզադաշտին վրայ:

Եւ ահա, Շրջանային Սկաուտական Խորհուրդի քոյր-եղբայրները, Հ.Մ.Ը.Մ.ի Շրջանային Վարչութեան ատենապետ եղբ. Բաֆֆի Իսբէնճեանի առաջնորդութեամբ, մարզադաշտ առաջնորդեցին Մուշեղ Արք. Մարտիրոսեանը, Հ.Մ.Ը.Մ.ի Նաւասարդեան 30րդ մարզախաղերու պատուոյ նախագահ տէր



եւ տիկ. Շանթ եւ Վերժին Հայթայեանները եւ «Տիպար Հ.Մ.Ը.Մ.ական» քոյր Լիլիթ եւ ամուսինը՝ Վահիկ Պաղտասարեանները, որոնք ողջունելով ներկաները, իրենց տեղերը գրաւեցին պատուոյ հարթակին վրայ:

Օրուան խօսնակներն էին քոյր Նորա Զափարեան (Հայերէն) եւ եղբ. Կարպիս Շխրտըմեան (անգլերէնով), որոնք խրախուսիչ յայտարարութիւններով ներկայացուցին Նաւասարդեան մարզախաղերու 30ամեայ նուաճումներն ու շրջանի Հ.Մ.Ը.Մ.ին անցած ուղին, յատկապէս յիշելով մեզմէ յաւէտ բաժնըւած պատասխանատու քոյր-եղբայրները:

ԳՐԾԱԿԻ ԱՐԱՐՈՂՈՒԹԻՒՆԸ

Պատուոյ նախագահին արտօնութեամբ եւ Շրջանային ընդհանուր խմբապետ եղբ. Հրայր Պոյաճեանի հրահանգով տեղի ունեցաւ դրօշակի տպաւորիչ արարողութիւնը: Շրջանի մասնաճիւղերէն կազմուած դրօշախումբի արիարենոյձները, շեփորախումբի եղանակներով եւ հաստատակամ քալուածքով մարզադաշտ ներկայացուցին Մ. Նահանգներու, Հայաստանի, Արցախի, Քայիֆորնիոյ, Հ.Մ.

Ը.Մ.ի եւ Նաւասարդեան դրօշները, ինչպէս նաեւ՝ Մ. Նահանգներու եւ Հայաստանի հսկայական երկու այլ դրօշներ, բարեւեցին պատուոյ հիւրերուն, ծովածաւալ ներկաներուն եւ կատարեցին դրօշակի արարողութիւնը, քարացած հետեւելով քայլերգներու նուազումին,

զոր դարձեալ կատարեց Շրջանային Վարչութեան շեփորախումբը:

ՕՐՈՒԱՆ ՀԻՒՐԵՐԸ

Օրուան հանդիսավարութիւնը կատարեց եղբ. Սիմոն Մանուչարեան, որ բարի գալուստի խօսքերէ հոք, դրուատեց Հ.Մ.Ը.Մ.ի կարեւոր դերը հայ երիտասարդութեան դաստիարակութեան մէջ եւ ընդգծեց կարեւորութիւնը Նաւասարդեան մարզախաղերուն, որոնք հազարաւոր երիտասարդներ կը համախմբեն մէկ երդիքի տակ, մարզական եւ միութենական մաքուր ոգին արմատացնելով անոնց մէջ: Ապա, ան ներկայացուց օրուան պաշտօնական հիւրերը, որոնց կարգին էին Մուշեղ Արք. Մարտիրոսեան, Լոս Անճելըսի մօտ Հայաստանի գլխաւոր հիւպատոս Գաբրիկ Կիրակոսեան, փոխ հիւպատոս Յարութիւն Կոճոյեան, Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան անդամ եղբայրներ՝ Մհեր Դաւիթեան եւ Մանուէլ Մարսէլեան, մարզախաղերու պատուոյ նախագահ տէր եւ տիկ. Շանթ եւ Վերժին Հայթայեաններ, «Տիպար Հ.Մ.



Ը.Մ.ական» քոյր Լիլիթ Պաղտասարեան, Հ.Յ.Դ. Արեւմտեան Միացեալ Նահանգներու Կեդրոնական Կոմիտէի կողմէ Յակոբ Թիւֆէնքճեան, ՀՕՄի Կեդրոնական Վարչութեան փոխ ատենապետուհի Յասմիկ Տէրտէրեան, Լոս Անճելըս դաւառի ոստիկանապետի ներկայացուցիչ Թեան Առուստամեան, Կլէնտէյլի քաղաքապետ Բաֆֆի Մանուկեան, Կլէնտէյլի քաղաքապետական խորհուրդի անդամներ Պապ Եուսէֆեան եւ Արա Նաճարեան, Կլէնտէյլ քաղաքի քարտուղար Արտաշէս (Արտի) Քասախեան, Լոս Անճելըսի քաղաքապետական խորհուրդի անդամ Ուէնտի Կրուըլ, Կլէնտէյլի կրթական միացեալ խորհուրդի անդամ Կրէկ Գրիգորեան, Պրըպէնքի նոյն խորհուրդի անդամ Փօլ Գրիգորեան, Լոս Անճելըս քաղաքի էնսինոյի շրջակայքի խորհուրդի անդամ Կրէկ Մարթայեան, քոյր կազմակերպութիւններու ներկայացուցիչներ, անցեալի պատուոյ նախագահներ եւ բազմաթիւ հիւրեր:



ՇՐՋԱՆԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԱՏԵՆԱՊԵՏԻՆ ԽՕՍՔԸ

Շրջանային Վարչութեան անունով հանդէս եկաւ ատենապետ եղբ. Բաֆֆի Իսբէնճեան, որ ողջունելէ ետք ներկաները, հակիրճ ակնարկ մը նետեց Հ.Մ.-Ը.Մ.ի հիմնադրութեան տուն տուող պատճառներուն եւ հետապնդած նպա-

տակներուն վրայ եւ ապա՝ կեդրոնացաւ շրջանի Հ.Մ.-Ը.Մ.ի հիմնադրութեան, Նաւասարդեան մարզախաղերու կարեւորութեան, անոնց ստեղծած աննախընթաց հայկական միջնորդութիւն վրայ: Ան վստահեցուց ներկաները, որ Հ.Մ.-Ը.Մ.ի պարտականութիւնները չեն աւարտած եւ աշխատանքները վերջ չունին:

Jewelry Burs from FOX! All shapes, all sizes!
Here are just a few!



2245 E. Colorado Blvd. 104-240
Pasadena, CA 91107 USA
arak@foxburs.com



Contact: ARA KHATCHIKIAN
Tel: 626-791-4327
Fax: 626-791-0866

The Diamonds' Choice



Հ.Մ.Ը.Մ.ի Արեւմտեան Մ. Նահանգներու Երջանային Վարչութեան ատենապետ եղբ. Բաֆֆի Իսբէնճեան, Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան անդամ եղբ. Մհեր Դաւիթեան եւ Առաջնորդ Մուշեղ Արք. Մարտիրոսեան:

«Այսօր մենք կը գտնուինք իւրայատուկ պայմաններու մէջ, ո՛չ միայն անցեալ դարաշրջանի դժուար օրերը անցած են, այլ՝ կը գտնուինք փայլուն իրականութեան մը մէջ: Ունինք ազատ հայրենիք մը, որ օրէ օր կը բարգաւաճի: Ունինք ուսեալ եւ կեանքի մէջ յաջողած սփիւռքահայութիւն: Ունինք

քաղաքական գետնի վրայ հաստատուած լաւ յարաբերութիւններ՝ մեր ապրած երկիրներու պետութիւններուն հետ: Եւ վերջապէս, ունինք երիտասարդ սերունդ մը, որ իր տրամադրութեան տակ ունի մեր նախահայրերուն համար աներեւակայելի թուացող կարելիութիւններ:

«Մեր ապագան անկասկած շատ փայլուն է: Այժմ ժամանակն է, որ համայն աշխարհի մէջ հայ ժողովուրդը գրաւէ իր արժանաւոր դիրքը: Յուսահատութիւնը պէտք է ջնջել մեր բառարանէն եւ երբեք չգտնուիլ տկարի եւ անիրաւուածի դիրքին մէջ», *Հաստատեց եղբայրը եւ եզրակացնելով՝ խոստացաւ, որ շրջանի Հ.Մ.Ը.Մ.ի մեծ ընտանիքը պիտի շարունակէ իր առաքելութիւնը, իրականացնելով մեր բոլոր ձգտումները, որպէսզի իւրաքանչիւր հայ երիտասարդ ունենայ առողջ միջավայր, հպարտ ու ինքնավստահ ինքնութիւն:*

Հ.Մ.Ը.Մ.Ի ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԽՕՍՔԸ

Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան պատգամը փոխանցեց եղբ. Մհեր Դաւիթեան: Ան ողջունելով Նաւասարդեան մարզախաղերու 30ամեայ նուաճումները, հպարտանքով յայտարարեց, որ անոնք իրազործումն են հայոց Արտաշէս Արքայի Նաւասարդեան նուիրական օրերու արձագանգը հանդիսացող բաղձանքին. «Ո՛ր տայր ինձ գծուխն ծխանի եւ զառաւօտն Նաւասարդի...»:





Թեամբ յայտարարեց, թէ «Աշխարհացը-րիւ այս մեծ կազմակերպութիւնը՝ Հ.Մ.Ը.Մ.ը Հունգարիոյ նոր մասնաճիւղով հարստացաւ:

«Մարտէյի նշանաւոր «Արծիւ» ֆութպոլի հայկական խումբը շուտով Հ.Մ.Ը.Մ.ին կը միանայ:

«Իսկ ամենայուզիչը, Մուսուլի հայուքիւնը, հակառակ Իրաքի պատերազմական ահաւոր պայմաններուն, իր երիտասարդութիւնը քաղաքական դժուարին այդ կացութենէն դուրս բերելու համոզումով, որոշած է Հ.Մ.Ը.Մ.ի Մուսուլի մասնաճիւղ ունենալ:

«Եւ այսպէս, Հ.Մ.Ը.Մ.ը օրէ օր կ'ուռնանայ եւ շարքերը կը խտացնէ մատղաշ սերունդներով, թէ՛ Սփիւռքի եւ թէ՛ ազատ ու անկախ մեր հայրենիքի, ազատագրուած Արցախի եւ օգնութեան կարօտ Զաւախքի մէջ»:

Եզրակացնելով, եղբայրը շնորհաւորեց Նաւասարդեան մարզախաղերուն 30ամեակը, շրջանի բիւրաւոր մարզիկ-մարզիկուհիները, պատասխանատու

Եղբ. Դաւիթեան Հ.Մ.Ը.Մ.ի շարքերը հայկական բանակ նկատելով յայտարարեց. «Ճամբայ բացեք, Հ.Մ.Ը.Մ.ն է որ կը փայլատակէ»:

Ապա, եղբայրը ներկայ հանդիսականները Հ.Մ.Ը.Մ.ի նորագոյն պատմութեան բախտաւոր վկանները նկատելով, վստահեցուց, որ տասնամեակներու միասնական ջանքի ու զոհողութեան

արդիւնքը հանդիսացող Նաւասարդեան մարզախաղերը պիտի շարունակուին եւ նոյն ոգին պիտի տիրապետէ հոն, ուր Հ.Մ.Ը.Մ.ը կը գործէ:

Կեդրոնական Վարչութեան նախաձեռնութիւններուն մասին խօսելով, եղբ. Դաւիթեան անդրադարձաւ համա-Հ.Մ.Ը.Մ.ական Դրդ մարզախաղերուն:

Այնուհետեւ, եղբայրը հպարտու-

**Sarkis
or
Paul**



SASSOUNIAN INC.

Tools - Supplies - Machines

Complete Line Of Jewelry Supply

716 S. Olive Street
Los Angeles, CA 90014

Tel: (213) 627-1220
(213) 627-1206
Outside Ca: 1-800-544-4419
Fax: (213) 623-6981

www.sassouniantools.com

E-mail: info@sassouniantools.com



մարմինները, իրենց անցեալի եւ ապագայ յաղթանակներուն համար:

Այս գեղեցիկ պատգամներէն ետք բեմը յանձնուեցաւ եղբ. Արիկ Գէորգեանի ղեկավարած Հ.Մ.Ը.Մ.ի «Արարատ» մասնաճիւղի սկսողական երգչախումբին, որ Նաւասարդեան մարզախաղերու 30ամեակին նուիրուած եւ ազգային երգերով զուարթ մթնոլորտ մը ստեղծեց մարզադաշտէն ներս:

ԱՌԱՋՆՈՐԳ ՍՐբԱՋԱՆԻՆ ՀԱՅՐԱԿԱՆ ՊԱՏԳԱՄԸ

Իր օրհնութիւններն ու շնորհաւորանքները փոխանցեց Առաջնորդ Մուշեղ Արք. Մարտիրոսեան եւ ընդգծեց, որ երեք տասնամեակ առաջ պատմական Նաւասարդեան խաղերու խորհուրդով սկիզբ առած Նաւասարդեան մարզախաղերը դարձած են հայադրոշմ ու ազնիւ մրցակցութեան միջավայր մը, որուն մէջ մեր սերունդները կը շնչեն հայօրէն եւ կը կերտուին իբրեւ ճշմարիտ քրիստոնեաներ:

«Նաւասարդեան 30րդ մարզախաղերը պատմական անկիւնադարձ մը կը կազմեն նաեւ, որովհետեւ այս տարի ազգովին կը նշենք Հայկական Յեղասպանութեան 90ամեակը եւ կը վերանորոգենք մեր բիրաւոր նահատակներուն ժառանգութեան հաւատարմութիւնը: Եւ արդեօք կարելի՞ է գտնել անելի սրտառուչ փաստ, ուր նահատակներու կտակն ու մեր իրաւատիրութեան կամքը կը մնայ ամուր ու մշտանորոգ, քան այս փառաւոր հանդիսութիւնը, որ ինքնին գործնական պատասխան մըն է ցեղասպանին ու ամբողջ աշխարհին, թէ հայը կա՛յ, կը մնայ, պիտի գոյատեւէ ու աննահանջ պիտի շարունակէ իր իրաւունքներուն պահանջատիրական երթը մինչեւ վերջնական յաղթանակ: **պատգամեց Առաջնորդ Սրբազանը:**

Նաւասարդեան մարզախաղերն ու օրուան հանդիսութիւնը բովանդակ հայութեան անբաժան մասնիկը ըլլալու պերճախօս վկայութիւնը նկատելով, Սրբազանը հաստատեց, որ «Մեր գաղութի գաւակները եւս բարձր կը պահեն այն աննիւթական դրօշը, որ իբրեւ նուիրական աւանդ մեզի հասած է հայ գիրքերու գիւտարար ու մեր մշակոյթի



հիմնադիր սերունդէն, կտրելէ ետք 1600 տարիներու համբայ եւ մեր աչքերը յառելով դէպի մեր լուսաւոր ապագայ»:

Ապա, շնորհաւորելով մարզախաղերու պատուոյ նախագահը, տարուան «Տիպար Հ.Մ.Ը.Մ.ական»ը, Նաւասարդեան ձեռնարկներու կազմակերպիչներն ու մասնակիցները, Մուշեղ Արք. վստահութիւն յայտնեց, որ նմանօրինակ զգացումներ պիտի ապրինք նաեւ, երբ շուտով հովուապետական այցով չըջան ժամանէ Մեծի Տանն Կիլիկիոյ Արամ Ա. կաթողիկոսը, միասնաբար տօնախմբելու կաթողիկոսութեան դպրեմանքի 75ամեակն ու իր գահակալութեան 10րդ տարեդարձը:

Սրտառուչ այս պատգամներէն ետք, մարզադաշտի երեք բեմերուն վրայ առանձնաբար ելոյթ ունեցան հայր ու դուստր Ալիք եւ Արաքս Կարապետեաններ՝ ազգագրական երգերով, վերջերս մեծ ժողովրդականութիւն չհասած «Ին Փրոկրէս» նուագախումբը՝ ժողովրդային երգերով, իսկ Գոռ Մխիթարեան եւ իր նուագախումբը՝ երգիչին նոր ստեղծագործութիւններով: Երեք խումբերն ալ տարբեր սերունդներու հայկական իրենց երգերուն մեկնաբանութեամբ ձոխացուցին մթնոլորտը:

ՏՈՂԱՆՅՔԸ ԵՒ ԲԱԺԱԿԱՏՈՒՉՈՒԹԻՒՆԸ

Եւ ահա, վերջապէս հասաւ այնքան սպասուած տողանցքի պահը: Շրջանա-

յին Վարչութեան շեփորախումբին ազգային ու յեղափոխական ոգեւորիչ եղանակներուն ընկերակցութեամբ, հպարտութեամբ տողանցեց Հ.Մ.Ը.Մ.ի ամբողջ ընտանիքը: Խտացած շարքերով եւ 30ամեակ կերտած հպարտանքով տողանցեցին Հ.Մ.Ը.Մ.ի 18 մասնաճիւղերը խիտ շարքերով: Անոնք «Տօնախմբենք՝ պահպանելով աւանդութիւնները» կարգախօսին հաւատարմութեամբ եւ Հ.Մ.Ը.Մ.ականի ինքնավստահութեամբ բարեւեցին պատուոյ հիւրերն ու զիրենք խրախուսող ծովածաւալ բազմութիւնը եւ շարուեցան դաշտին կեդրոնը:

Յատկանշական էր Հ.Մ.Ը.Մ.ի Լոս Անճելըսի մասնաճիւղին պարզած հսկայական պատասառը, որ հպարտութեամբ կը շնորհաւորէր մասնաճիւղի հիմնադիր անդամներէն Շանթ եւ Վերժին Հայթախեանները, Նաւասարդեան 30րդ մարզախաղերու պատուոյ նախագահութիւնը ստանձնած ըլլալուն առիթով:

Հ.Մ.Ը.Մ.ի տողանցող շարքերով մեծապէս ոգեւորուած, ներկաները երկարաշունչ ծափողոյններով, «հուռուռ» ներով եւ «պուաւո»ներով ողջունեցին տողանցողները:

Գնահատական խրախուսիչ արտայայտութիւններով մասնաճիւղերը ներկայացուցին եւ անոնց արձանագրած մրցանակները յայտարարեցին քոյր Նորա Չափարեան եւ եղբ. Կարպիս Շիրտումեան:

Ահա հասաւ Նաւասարդեան մարզախաղերու գլխաւոր առանցքը հանդիսա-

ցող յաղթանակի բաժակներու յանձնումի պահը:

Որոտընդոստ ծափող-ջոյներու ընդմէջէն, մասնաճիւղերու ներկայացուցիչները հպարտութեամբ ստանձնեցին երկու ամիսներու պայքարի արդիւնքը հանդիսացող ախոյեանութեան բաժակները: Շրջանային Վարչութեան ատենապետ եղբ. Բաֆֆի Իսբէնճեանի եւ Շրջանային Վարչութեան մարզական բաժանմունքի ներկայացուցիչ եղբ. Վիգէն Աբէլեանի գլխաւորութեամբ, բաժակներու յանձնումը կատարեցին Մուշեղ Արք. Մարտիրոսեան, Կեդրոնական Վարչութեան անդամ եղբայրներ Մհեր Դաւիթեան, Մանուէլ Մարսէլեան եւ պատուոյ նախագահ Շանթ եւ Վերժին Հայթայեան:

Շեփորախումբի «Ով հայ արի» եւ



«Հայեր, միացէք» գեղեցիկ կատարումէն ետք, տոնախմբութիւնը վերջ գտաւ դրօշակի արարողութեամբ: Շրջանային խմբապետուհի քոյր Թայլին Հինտոյեան պաշտօնապէս Շրջանային Վարչութեան ատենապետ եղբ. Բաֆֆի Իս-

թողովրդային, ազգային եւ յեղափոխական երգերը: Նաւասարդեան խրախճանքը շարունակ-լեցաւ մինչեւ կէս գիշեր:

բէնճեանին յանձնեց մարզադաշտին վրայ ծածանած Նաւասարդեան դրօշը: Եղբ. Իսբէնճեան իր հերթին զայն նուիրեց պատուոյ նախագահին:

Ներկաները գոհունակութեամբ փութացին փառատօնի շրջափակը, ունկնդրելու ծանօթ երգիչներ Ժոզէֆ Գրիգորեանի, Ներսիկ Իսպիրեանի եւ Յարութ Փամպուլճեանի

Maison Mere
4 Sekkat El Manakh, Cairo - Egypt
Tel: (202) 3913296 - 3918542
Fax: (202) 3903899

Ramses Hilton
Tel: (202) 5758000 - 5744400
Direct: (202) 5751790

Zamalek
11 Hassan Sabry st., Degla center
Tel: (202) 3322121 - 3322130
Fax: (202) 3322130



**VARTAN
KAZANDJIAN**



KAZANDJIAN

E-mail: vartan@intouch.com **Joillier-Orfevre Fonde en 1920**



«ՏԻՊԱՐ Հ.Մ.Ը.Մ.ԱԿԱՆ-2005»Ը՝ ՔՈՅՐ ԼԻԼԻԹ ՊԱՂՏԱՍԱՐԵԱՆ

Քոյր Լիլիթ Պաղտասարեան ծնած է Թեհրան, Պարսկաստան:

Մնողները, որոնք իրենց ամբողջ կեանքին ընթացքին հայերէն լեզուի ուսուցիչներ եւ գործօն միութենականներ եղած են, զինք միայն մանկապարտէզի տարիներուն զրկած են Համատանի հայկական վարժարանը: Այնուհետեւ, Թեհրան վերադառնալով, նախակրթարանի, միջնակարգի եւ երկրորդականի ուսումը ան ստացած է պարսկական վարժարաններու մէջ, մասնագիտանալով բնագիտութեան մէջ: Համալսարանական ուսումը շարունակած է ճարտարապետական ճիւղին մէջ:

11 տարեկանին, մօրը առաջնորդութեամբ, քոյր Լիլիթ անդամակցած է ծննդավայրի Հայ Մշակութային «Արարատ» կազմակերպութեան (Հ.Մ.Ը.Մ.) երաժշտական բաժանմունքին: Քանի մը տարի ետք, կազմակերպութիւնը սկստական բաժանմունք ստեղծելով, եղած է անոր առաջին արեւոյշներէն, միաժամանակ հետեւելով մարզական բաժանմունքի աշխատանքներուն, յատկապէս՝ պասքեթպոլի եւ փինկ-փոնկի: Նոյն տարիներուն անդամակցած է Հայ Յեղափոխական Դաշնակցութեան Պատանեկան Միութեան, ուր կուսակցութեան գաղափարներուն հաւատարմով եղած է երգուեսլ շարքային:

1959ին քոյր Լիլիթ ամուսնացած է Հ.Մ.Ը.Մ-ի պասքեթպոլի ծանօթ մարզիչներէն երկրաչափ Վահիկ Պաղտասարեանի հետ: Բախտաւորուած է մէկ դուստրով՝ Արմինէ եւ երկուորեակ մանչ զաւակներով՝ Արմոնտ եւ Արեգ:

Կարճատեւ շրջան մը ընտանեկան հոգերով տարուած՝ դադրած է միութենական գործունէութենէ: Այնուհետեւ, աշխատանքի սկսած է մեծ ներդրում ունենալով Հ.Մ.Ը.Մ-ի 20ամեակի աշխատանքներուն մէջ, միաժամանակ ըլլալով հիմնադիրներէն մէկը երաժշտական միութեան: Ընտրուած է միութեան Կեդրոնական Վարչութեան անդամ:

Քոյրը գործօն մասնակցութիւն ունեցած է Թեհրանի մարզականի նախաձեռնութեան եւ անոր շինարարական աշխատանքներուն իրականացման մէջ: Ուսման իր ծարաւը յագեցնելով, ան Միացեալ Նահանգներու համալսարաններէն մէկուն հետ հեռակայ կարգով հետեւած է «Պիզըրա Մէնէյմընթ»ի ճիւղին:

1979ին, Իրանի իսլամական յեղափոխութեան սկիզբը, ընտանիքին հետ փոխադրուած է Միացեալ Նահանգներ: Անմիջապէս ուսուցչութեան հրաւիրուած է «Շամլեան» Ազգ. Վարժարան:



2005ի «Տիպար Հ.Մ.Ը.Մ.ական»՝ քոյր Լիլիթ Պաղտասարեան եւ Հ.Մ.Ը.Մ-ի Արեւմտեան Միացեալ Նահանգներու Երջանային Վարչութեան ատենապետ եղբ. Բաֆֆի Իսթէնճեան:

Տարի մը ուսուցչութիւն կատարելէ ետք, ամերիկեան մեծ ընկերութեան մը մէջ աշխատած է իբրեւ հաշուապահ եւ իր հմտութեամբ հասած է պատասխանատուի պաշտօնին:

15 տարի ամերիկեան այս հաստատութեան մէջ աշխատելէ ետք, իր մանկութեան երազանքը իրականացնելով՝ բացած է անձնական իր մանկամստուրը, զոր կը ղեկավարէ մինչեւ օրս:

Հակառակ իր բազմազբաղութեան, Քոյր Լիլիթ 1982ին միացած է Հ.Մ.Ը.Մ-ի Կլէնտէյլի «Արարատ» մասնաճիւղին եւ եղած է երէցական բաժանմունքի հիմնադիրներէն:

1985ին ընտրուած է վարչութեան անդամ եւ տարիներ շարունակ վարչութեան մէջ ստանձնած է զանազան պաշտօններ. քարտուղար, բաժանմունքներու ներկայացուցիչ, ատենապետ եւ այլն: Քոյրը իր ստանձնած պարտականութիւնները կատարած է գիտակից միութենականի պատասխանատուութեամբ: Շրջան մը (երկու տարի) նշանակուած է նաեւ Շրջանային Վարչութեան անդամ:

2003ին նախաձեռնած է եւ խմբագրած է մասնաճիւղի 25ամեակի գրքոյկը: Ան գաղութի ազգային կեանքին իր օգտակար ներդրումը ունեցած է: Օգնութեան ձեռք երկարած է եւ նոյնիսկ պատասխանատուութիւն ստանձնած է «Համազգա-



յին»ի, «Լարք»ի, Դաշնակցութեան Օրուան տօնախմբութեան եւ հանրային այլ ձեռնարկներու կազմակերպման մէջ եւ իր ասմունքներով մեծապէս տպաւորած է շրջապատը:

«Հ.Մ.Ը.Մ.ը ինձ համար են դպրոցներից եւ, որ պէտք է որ յանախես, իսկ եթէ չյանախես՝ կեանքիդ ամենամեծ սխալն էս առել եւ ամենամեծ անդունդն է պատրաստուել: Հ.Մ.Ը.Մ.ը քեզանից անկախ, առանց դպրոցական դասարանի դասարան է, չգրուած գիրք է, որ թեկուզ եօթը կամ եօթանասուն տարեկան կեանքիդ սովորելիք ունես: Հ.Մ.Ը.Մ.ի նման ոչ մէկ կազմակերպութիւն կայ, որ կարողանայ քեզ կեանքը դիմակալելու պատրաստի: Իմ զգացմունքներս նախ կու գան Թեհրանի «Արարատ» կազմակերպութենէն եւ ապա հոս՝ Հ.Մ.Ը.Մ.էն, ուր շփուելով 7-8 տարեկանների հետ, նրանցից բան սովորեցի՝ տեսնելով նրանց անմեղութիւնը, պարզութիւնը եւ անհոգութիւնը: 18-20 տարեկանների հետ ժողովի եւ նստում եւ տեսնում ես նրանց աշխուժութիւնն ու կայտառութիւնը: Յետոյ, մի քիչ բանի-



մաց դարձած գալիս եւ երեցների շարքերում եւ կարողանում ես բոլոր նկարագրերի հետ համագործակցել: Սրանք բոլորը են միջոցներն են, որոնք մարդ էակին պատրաստում եւ սովորեցնում են կեանքը իր մանրամասնութիւնների մէջ: Ես հայոց դպրոց չեմ գնացել, սակայն իմ հայերէնս միութիւնում եմ սովորել: Միութեան մէջ է, որ ձիրքերդ ի յայտ կը գան, որի համար երախտապարտ եմ: Հայերի պարագային, երբ հայրենիքից հեռու ենք, Հ.Մ.Ը.Մ.ը եւ նրան նման միութիւններն են, որ մեզ լաւ հայ են պատրաստում», կը հաստատէ քոյր Լիլիթ:

«Տիպար Հ.Մ.Ը.Մ.ականի տիտղոսին արժանանալու լուրը անակնկալ էր ինձ համար: Թեեւ սպասում, ակնկալութիւն չունեի, սակայն ճիշդն ասաց շատ ուրախացայ, որ ոչ միայն իմ աշխատանքս է գնահատում, այլ՝ նոր սերունդներին կարողացել ենք մէ բան փոխանցել, որին գիտակցում են եւ արժեւորում», կ'եզրափակէ ան:

'Made from one single slice of natural Australian opal'

Classique®

OPAL DIAL WATCH

Sarkis Der Bedrossian

*Sams Watchmaker Jeweller Pty. Ltd.
123 Clarence Street
Sydney 2000
Australia*

*Phone: +61 2 9290 2199
fax: +61 2 9262 1630
Website: www.classiquewatches.com
Email: Info@classiquewatches.com*



ՆԱԽԱՍԱՐԴԵԱՆ 30ՐԴ ՄԱՐԶԱԽԱՂԵՐՈՒ ՊԱՏՈՒՈՅ ՆԱԽԱԳԱՀ ՏԵՐ ԵՒ ՏԻԿ. ՇԱՆԹ ԵՒ ՎԵՐԺԻՆ ՀԱՅԹԱՅԵԱՆՆԵՐ

50 հազար տղարի նուիրատուութեամբ, Նաւասարդեան այս տարուան մարզախաղերուն պատուոյ նախագահութիւնը ստանձնեցին տէր եւ տիկին Շանթ եւ Վերժին Հայթայեաններ:

Եղբ. Շանթ Հայթայեան ոսկեղէնի եւ ադամանդի առեւտրական, ծանօթ Հ.Մ.-Ը.Մ.ական մըն է, որ իր համեստութեամբ եւ շրջանէն ներս սրտաբուխ նուիրատուութիւններով գաղութին յարգանքը կը վայելէ: Ան ծնած է Պէյրութ, Լիբանան: Նախնական ուսումը ստացած է Էշրէֆիէի Ս. Յակոբ Վարժարանը (այսօր՝ Չաթապալաեան Ազգ. Վարժարան), իսկ երկրորդականը՝ նախ Մխիթարեան վարժարանը եւ այնուհետեւ Նշան Փալանճեան ճեմարանը: Երկու տարի Պէյրութի School of English and Advance Studies վարժարանին մէջ անդրերէն լեզուի մէջ մասնագիտանալէ ետք՝ նետուած է կեանքի ասպարէզ:

Եղբ. Շանթ հասակ նետած է Էշրէֆիէի «Ազատամարտ» ակումբին մէջ: Եօթը տարեկանին անդամակցած է Հ.Մ.-Ը.Մ.ի տեղւոյն մասնաճիւղին, իբրեւ գայլիկ եւ այսօր՝ սկառուտ, խմբապետ ունենալով ծանօթ Հ.Մ.-Ը.Մ.ական ղեկավար եղբ. Ժիրայր Սարգիսեանը: Պատանեկան տարիներուն յատուկ սէր ունեցած է առեւտրական կեանքին, ազատ ժամերուն հօրը եւ մեծ եղբօրը հետ աշխատելով կօշիկի իրենց վաճառատան մէջ:

1972ին փոխադրուած է Միացեալ Նահանգներ, ուր սկզբնական տարիներուն հազուատեղէնի վերաբերեալ զանազան աշխատանքներու ձեռնարկելէ ետք, 1978ին ոսկերչութեան սկսած է: Նոյն տարին ծանօթացած եւ ամուսնացած է Վերժին Աբրահամեանի հետ:

Հայթայեան զոյգը այսօր Երկրի բախտաւորուած է երկու մանչ զաւակով՝ Հայկ եւ Մայք: 1978ին, եղբ. Շանթ տիկնոջը հետ անդամակցած է Հ.Մ.-Ը.Մ.ի Լոս Անճելըսի մասնաճիւղին եւ երկուքը գործօն անդամներ եղած են մասնաճիւղի ընկերային յանձնախումբին, որ այդ օրերուն երիտասարդական միակ միաւորն էր: Հակառակ իր բազմազբաղութեան, ան լայն ժամանակ տրամադրած է Հ.Մ.-Ը.Մ.ին, որուն համար բազմիցս գնահատուած է թէ՛ իր մասնաճիւղին եւ թէ՛ Շրջանային Վարչութեան կողմէ:

Իբրեւ պարտականութեան գիտակից միութենական եղ-



Նաւասարդեան 30րդ մարզախաղերու պատուոյ նախագահ՝ տէր եւ տիկին Շանթ եւ Վերժին Հայթայեաններ:

բայր, եղբ. Շանթ պատասխանատու պաշտօններ ստանձնած է Հ.Մ.-Ը.Մ.ի Լոս Անճելըսի մասնաճիւղէն ներս. եղած է վարչական եւ երկար տարիներ ղեկավարած է ընկերային յանձնախումբը: 1980էն ի վեր եղբայրը աշխատանք կը տանի Շրջանային Վարչութեան տնտեսական յանձնախումբին մէջ: Երկու շրջան (չորս տարի) եղած է Շրջանային Վարչութեան անդամ: Մեծ է եղբօր վաստակը Նաւասարդեան ձեռնարկներու յաջողութեան եւ յատկապէս՝ Նաւասարդեան յաղթանակի պարահանդէսներուն կազմակերպման մէջ:

Ընկերասիրութենէ մղուած, եղբ. Հայթայեան մեծ դեր ունեցած է իրեն մօտիկ միութենական եւ գործի ընկեր՝ հանգուցեալ Զարեհ Տէօրտիւլեանի յիշատակին կրթաթոշակի եւ թենիսի տարեկան մրցաշարքի ստեղծման մէջ:

2000ին, Հ.Մ.-Ը.Մ.ի Արեւմտեան Միացեալ Նահանգներու Շրջանային Վարչութիւնը բարձր գնահատելով եղբօր միութենական օրինակելի գործունէութիւնը անոր շնորհած է «Տիպար Հ.Մ.-Ը.Մ.ական»ի տիտղոսը:

Եղբօր համար Հ.Մ.-Ը.Մ.ը փիլիսոփայութիւն մըն է, որուն նշանաբանը՝ «Բարձրացի՛ր-բարձրացու՛ր»ը մեծ ազդեցութիւն ունեցած է իր ընտանեկան կեանքին յաջողութեան մէջ:

Եղբ. Հայթայեանի համոզումով՝ «Հ.Մ.-Ը.Մ.ը հայկական-ուրբեան դարբնոց մըն է, որ հայ երիտասարդութեան տունն է եւ դպրոցն անկախ, կարգապահութիւն կը սորվեցնէ եւ ապագայ հայրենասէր հայր կը պատրաստէ, որպէսզի ան իր

պատրաստութեամբ պատիւ բերէ իր ազգին: Առաւելաբար կը հաւատամ Հ.Մ.Ը.Մ.ին, որովհետեւ ան կամաւոր աշխատանքի հաւատքը եւ ոգին կը սերմանէ իր անդամներուն մէջ:

«Հաւատաւոր շատ մը Հ.Մ.Ը.Մ.ականներու կարգին իմ եւ Վերժինին երազն է նաեւ, որ Հ.Մ.Ը.Մ.ը ունենայ իր արժանի կեդրոնը, մարգական իր բոլոր կարելիութիւններով, որպէսզի տեղւոյն գաղութը եւ յատկապէս երիտասարդութիւնը օգտուի անոր բարիքներէն: Այս իմաստով խմորը գոյութիւն ունի եւ մեր գաղութին կը մնայ գօրակցիլ Հ.Մ.Ը.Մ.ին, որպէսզի այդ երազը իրականանայ: Կը հաւատամ, որ անկարելի բան գոյութիւն չունի, ժամանակի եւ նիւթականի հարց է», կը հաստատէ եղբայրը, խոստանալով ամէն գնով օգտակար հանդիսանալ Հ.Մ.Ը.Մ.ականի այս երազին իրականացման:

Նաւասարդեան մարգախաղերու պատուոյ նախագահութիւնը ընդունելու որոշումին գծով հարցումի մը պատասխանելով, եղբայրը կը յայտնէ, թէ «Հ.Մ.Ը.Մ.ը մեր երկուքին կեանքին մէջ ալ մեծ դեր խաղացած է: Ես եւ Վերժինը մեր կեանքի յաջողութեան մէջ մեծ բան կը պարտինք Հ.Մ.Ը.Մ.ին, որուն համար երախտապարտ ենք եւ պարտական՝ այս մեծ ընտանիքին: Այսօր երբ լաւագոյն առիթը ներկա-



յացած է մեզի, մեծ հաճոյք է մեզի Աստուծոյ տուած շնորհներն ու նիւթական բարիքները բաժնեկցիլ Հ.Մ.Ը.Մ.ին հետ: Այս մեր պարտքն է, որովհետեւ Հ.Մ.Ը.Մ.ը իբրեւ մարդ քրծած է մեզ, իբրեւ ազգասէր հայորդիներ իմաստ տուած է մեր կեանքին եւ մենք հարուստ ենք մեր շրջապատով, ընկերային կեանքով եւ մանաւանդ՝ կեանքի ապահովութեամբ»:

FREDDY KARAGEUZIAN

"ONNIG OF CAIRO"

Egyptian Museum

Tahrir Square - Cairo





Tel: 7730065 Fax: 5081613 E-mail: freddy@gega.net



Հ.Մ.Ը.Մ.Ի ԳԱՆԱՏԱՅԻ ՇՐՋԱՆԻ ՄԻՋ-ԽՄԲԱՊԵՏԱԿԱՆ ԺՈՂՈՎԸ...

Տ. Շահինեան
ՄՈՆԹՐԷԱԼ

Եւրոպայի Միության շրջանակներում կազմակերպված Վարչութեան 10-11 Սեպտեմբեր 2005 թ. շաբաթավերջին, Քինկսթրնի «Էմպլոյմենթ» պանդոկին մէջ տեղի ունեցաւ շրջանային խմբակային ժողովը:

Ժողովին բացումը կատարուեցաւ «Յառաջ նահատակ» քայլերգով: Բարի գալուստի եւ բացման խօսքը փոխանցեց Շրջանային Վարչութեան ատենապետ եղբ. Սեդրակ Պուրսախեան: Եղբայրը բացատրեց ժողովին կարեւորութիւնը եւ շեշտեց ժողովին օրակարգին հանդէպ լուրջ մօտեցում ունենալու անհրաժեշտութիւնն ու յանձնառութիւնը, տալու համար դրական եւ արդիւնաւէտ որոշումներ: Իսկ ամենակարեւորը, հետապնդելու համար տրուած որոշումներուն գործադրութիւնը մասնաճիւղերէն ներս:

Դիւանի անդամներ ընտրուեցան եղբ. Արա Գուլումճեան՝ ատենապետ եւ քոյր Լիզ Պալեան՝ ատենադպրուհի: Ժողովակազմներուն ներկայութեան եւ լիազօրագիրներու ստուգումի ընթացքին



մասնակցողները ծանօթացան իրարու: Ապա, ժողովը անցաւ իր աշխատանքներուն եւ լսեց մասնաճիւղերու սկաուտական գործունէութեան վեցամսեայ տեղեկագիրները:

Օրակարգը կը բաղկանար 8 կէտէ, իր մէջ ընդգրկելով սկաուտական մասնագիտական նիւթեր, ինչպէս՝ սկաուտական դասագիրքեր, բանակումներ, տարագներ, սեմինարներ եւ այլն:

Օրակարգի կարեւորագոյն նիւթերէն մէկն էր Համա-Հ.Մ.Ը.Մ.ական բանակումը: Խմբակները լայնօրէն քննեցին Համա-Հ.Մ.Ը.Մ.ական ճրգ ընդհանուր բանակումին մասնակցութեան աշխատանքները (խմբակային կազմ, մասնակցութեան պայմաններ, կարգապահական, յուշանուէրներ, ճամբորդութիւն եւ այլն): Կարգացուցան մասնաճիւղերէ եկած առաջարկներն ու մտահոգութիւնները, որոնք

արձանագրուեցան բանաձեւի յանձնախումբին կողմէ: Բանակումի նախապատրաստական աշխատանքներուն համար ժողովը յառաջացուց 7 հոգիոց յանձնախումբ մը:

Կիրակի առաւօտ, ժողովը լայնօրէն քննեց օրակարգի մնացեալ կէտերը: Խմբակները ներկայացուցին մասնաճիւղերու դիմագրուած դժուարութիւնները եւ կարծիքներու փոխանակումով մշակեցին նոր ծրագիրներ:

Ճաշի դադարէն ետք, ժողովը վերսկըսաւ զարգացման մրցումով մը: Խմբակները վեց խումբի բաժնուած՝ փորձեցին պատասխանել Հ.Մ.Ը.Մ.ի պատմութենէն եւ կանոնադրութենէն քաղուած հարցումներու (պատրաստուած՝ եղբ. Վահան Չալքեանի կողմէ):

Ժողովի աւարտին, Շրջանային Վարչութեան անդամ եղբ. Բաբգէն Կարապետեան շնորհակալեց ժողովակազմին՝ օրակարգի զանազան նիւթերուն իրենց լուրջ մօտեցումին համար եւ գնահատեց խմբակներուն կատարած առաքելութիւնը՝ նորահաս սերունդներուն ազգային դաստիարակութեան գործին մէջ եւ յաջողութիւն մաղթեց բոլոր մասնաճիւղերուն:

Ժողովը փակուեցաւ յետմիջօրէի ժամը 4.30ին, Հ.Մ.Ը.Մ.ի քայլերգով:

... ԵՒ ՄԻՋ ՎԱՐՉԱԿԱՆ ԺՈՂՈՎԸ

Տ. Շահինեան
ՄՈՆԹՐԷԱԼ

Ընթացիկ տարեշրջանի իր գործունէութեան ծիրէն ներս, 11 Սեպտեմբեր 2005ին, Հ.Մ.Ը.Մ.ի Գանատայի Շրջանային Վարչութիւնը կազմակերպեց միջ-վարչական իր երկրորդ ժողովը, որ տեղի ունեցաւ Օնթարիո նահանգի Քինկսթրն քաղաքի «Էմպլոյմենթ» պանդոկի սրահին մէջ:

Ժողովին բացումը կատարեց Շրջանային Վարչութեան ատենապետ եղբ. Սեդրակ Պուրսախեան, բացատրելով ժողովին նպատակն ու գլխաւոր օրակարգը: Ապա, հակիրճ զեկոյցով մը ան անդրադարձաւ Շրջանային Վարչութեան անցնող ամիսներուն ունեցած գործունէութեան, յատկապէս Համա-Հ.Մ.Ը.Մ.ական Դրդ մարզախաղերուն եւ Հ.Մ.Ը.Մ.ի միջ-

գլխավորական խորհրդադատական մասնակցություն, 1-3 Օգոստոս 2005ին, Աթենքի մէջ:

Այնուհետեւ, իւրաքանչիւր մասնաճիւղի վարչութիւն բերանացի հակիրճ գեկոյց մը տուաւ անցնող ամիսներու իր գործունէութեան մասին: Թորոնթոյի մասնաճիւղի ատենապետ եղբ. Ջարեհ Տէրվիչեան գեկոյցեց Գանատայի շրջանի ձմեռնային ՅՏԴ խաղերու նախապատրաստական աշխատանքներուն մասին, որմէ ետք ժողովը լայնօրէն քննեց օրակարգի մնացեալ հարցերը: Վարչական գործառնութիւններ, մարզական շարքերու միութեանական դաստիարակութիւն, Միացեալ Նահանգներու շրջանի հետ գործակցութիւն, հայրենիքի մէջ քոյր մասնաճիւղի մը «որդեգրում», «Մարգիկ» պաշտօնաթերթի 25ամեակ եւ այլ հարցեր:



Ժողովի վերջին բաժինը յատկացուած էր գեկոյցումներու: Մասնաճիւղերը գեկոյցեցին իրենց յաջողութիւններուն եւ դժուարութիւններուն մասին ու փորձեցին միասնաբար յանգիլ լուծումներու:


Ճաշի սպասարկութեանէն ետք, եղբ. Արմէն Կէտիկեան դասախօսեց վարչական աշխատանքներու եւ ժողովական

կեանքի աշխատանքային ձեւերուն մասին: Եղբայրը առաջարկեց մասնաճիւղերէն ներս գարկ տալ դաստիարակչական սեմինարներու, ապագային ատակ անդամներու պատրաստութեան համար:

Միօրեայ այս ժողովը վերջ գտաւ յետմիջօրէի ժամը 4:30ին, «Յառաջ նահատակ» քայլերգով:

With the compliments of

Restaurant Al-Mayass



ԳԵՂՄԱՆՈՂ

ղեցական աւանդութեան, հոն պահուած է այն գեղարդը, որով խոցած են Քրիստոսը:

Ս. Գեղարդը Հայաստան բերուած է 1159ին, իսկ արաբական արշաւանքներէ պաշտպանուելու համար, 1250ին բերուած է Այրիվանք, լեռներու մէջ մոռցուած այս կեդրոնը: Գեղարդը հոն պահուած է մինչեւ 1419, որմէ ետք փոխադրուած է Էջմիածին, ուր կը գտնուի մինչեւ օրս:

Գեղարդի վանական համալիրը ծանօթ է իր քարայրներով եւ ժայռափոր տաճարներով, որոնք կառուցուած են Զաքարեաններու եւ Պռոշեաններու օրով, 13րդ դարուն:

Գլխաւոր եկեղեցին՝ Ս. կաթողիկէն կառուցուած է 1215ին: Եկեղեցւոյ արեւմտեան կողմը 1225ին կառուցուած է ժամատունը, որուն հիւսիսային պատը ժայռն է: Անկէ կը սկսին ժայռափոր երկու եկեղեցիներու մուտքերը: Եկեղեցիները շինուած են 1283ին, Գալձակ ճարտարապետին կողմէ:

Ժայռափոր երրորդ շինութիւնը երկու եկեղեցիներուն վերեւը գտնուող բաժինն է, որ իբրեւ դամբարան ծառայած է Պռոշեան տոհմի ներկայացուցիչներուն եւ վանքի միաբաններուն:

Մայրի Լատոյեան ՊԷՅՐՈՒԹ

Գեղարդի վանական ժայռափոր համալիրը հայ ժողովուրդի պատմական եւ մշակութային կարեւոր կեդրոններէն մէկն է: Մատենագիրներու համաձայն, վանքին հիմնադրութիւնը կը վերագրուի Գրիգոր Լուսաւորիչին:

Ժամանակին, վանքը կոչուած է Այրիվանք, որովհետեւ չըջանի քարայրներէն մէկուն մէջ ապաստանած է անուանի մատենագիր Մխիթար Այրիվանեցին:

Այրիվանքը հետագային կոչուած է Գեղարդավանք կամ Գեղարդի վանական համալիր, որովհետեւ ըստ եկե-

ԻՆՉՊԵՍ ԿԸ ՊԱՏՈԱՍՏՈՒԻ ԹՈՒՂԹԸ

Մառերը կոծղերու բաժնէլէ ետք, մարդիկ կը տաշեն տախտակը ու ապա նիւթեր խառնելով անոր՝ կը յառաջացնեն թուղթը:

Ըստ աւանդութեան, թուղթի գիւտը կատարուած է չինացի Յայ Լունի կողմէ, երկրորդ դարու սկզբնաւորութեան:

Թուղթը Հայաստանի մէջ սկսած է գործածուիլ 8-9րդ դարերուն, իսկ Եւրոպայի մէջ առաջին անգամ յայտնուած է 10րդ դարուն:

Թուղթերու ճամբով ո՛չ միայն կը պատրաստուին գիրքեր ու թերթեր, այլ նաեւ՝ տոպրակներ, պարաններ, պաստառներ, պաղպաղակի բաժակներ եւ այլն:





ԿԵՆԴԱՆԻՆԵՐՈՒ ԱՇԽԱՐՀԷՆ

ԿՌՈՒՆԿԸ



զոց մոխրագոյն է, իսկ փետուրներուն ծայրերն ու վիզի բաժինը սև կ'ըլլան:

Այս թռչունները կ'ուտեն կանաչու թիւն, հատիկ եւ որդ:

Կ ու ու ն կ ն երը միասին կ'ապրին: Անոնք դանդաղօրէն կը թռչին երամ-երամ ու կը քնանան՝ իրենց գլուխը պահելով միայն մէջ: Երամէն միայն կ'ուռնկ մը արթուն մնալով կը հսկէ խումբին:

Երբ երամը կը թռչի, կ'ուռննայ «խմբապետ» մը, որ կ'առաջնորդէ խումբը, իսկ երբ «խմբապետ»ը յոգնի, կ'անցնի խումբին ետեւը եւ զայն

Կ ու ու ն կը նկատուի թռչունի ամէնէն մեծ տեսակներէն մէկը, որուն հասակը մօտաւորապէս 127 սանթիմետր կ'ըլլայ, իսկ կշիռքը՝ շուրջ կէս քիլո: Կ ու ու ն կ ն երու փետուրին գոյնը

կը փոխարինէ նոր «խմբապետ» մը: Կ ու ու ն կ ն երը շարունակ կը գաղթեն երկիրէ երկիր, փախուստ տալով ձմրան պաղ եղանակէն: Երբ ամառը հասնի, անոնք կը վերադառնան իրենց ծննդավայրը: Այս կենդանիներուն գաղթը մեզի կը յիշեցնէ հայ ժողովուրդին գաղթը: Նիւթ մը, որ ներկայացուած է մեր բանաստեղծներուն կողմէ:



ՅԱՆՇԵԼՈՒԿ

Ո՞վ է, ի՞նչ է: Քեզի կը պատկանի, բայց ուրիշներ քեզմէ աւելի կը գործածեն: (Պատասխանը՝ յաշորդիւ: Նախորդ հանելուկին պատասխանն էր՝ սիրտ)

ՄԱՐԶԱԿԱՆ

ՅԷՆՏՊՈԼ



Հ էնտպոլը կը խաղցուի երկու ձեւով, մէկը՝ սրահի մէջ, իսկ միւսը՝ բացօթեայ: Երկու ձեւերը ծագում առած են միաժամանակ: Տարբերութիւնը դաշտին չափին եւ խաղացողներուն թիւին մէջ է:

1892ին, Ճ. Քլենքըրը անունով երիտասարդ մը կը ստեղծէ հէնտպոլի նախնական տարբերակը, որ կը խաղցուի 7 հոգիով: Խաղին հիմնական ստեղծիչը, սակայն, կը նկատուի գերմանացի Քարլ Շչլենց, որ 1919ին կը մշակէ խաղին օրէնքները: 1928ին կը հիմնուի հէնտպոլի առաջին միջազգային ակումբը:

Տարիներ, հէնտպոլի երկու ձեւերը՝ 7 մարդիկով եւ 11 մարդիկով կը խաղցուին: Երկու ձեւերն ալ մաս կը կազմեն ողիմպիական խաղերուն, սակայն 1972ի ողիմպիականէն ետք, ան կը խաղցուի 7 մարդիկով միայն:





Էլի Հուլիշեան

«ՄԱՐԶԻԿ»Ի «ՔԱԶԱԼԵՐ ԱՆԴԱՄ» ՆԵՐ

Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան որոշումով, հաստատուած է «Մարզիկ»ի «Քաջալեր անդամ»ներու դրուժին մը: Թերթին «Քաջալեր անդամ» կը նկատուին բոլոր անոնք, որոնք տարեկան 200 եւ աւելի ամերիկեան տոլար կը նուիրեն անոր բարգաւաճման ծրագիրներուն:

«Քաջալեր անդամ»ներու անունները կը հրատարակուին թերթին յաջորդական 12 թիւերուն մէջ: «Մարզիկ»ի «Քաջալեր անդամ»ներն են-

●ԱՐԵՒՄՏԵԱՆ ՄԻԱՅԵԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐԷՆ Չարլի Կալեան, Վարանդ Մելքոնեան, Հ.Մ.Ը.Մ.ի վեթերան ֆութպոլիստներ, Արեւմտեան Մ. Նահանգներու Ալգալին Առաջնորդարան, Ժիրայր Սարգիսեան, Ալպէր Շահինեան, Օրէնձ Քաունթիի «Սարդարապատ» մասնաճիւղ, Պրոպէնքի «Սիփան» մասնաճիւղ, Տրեպնոյի «Սասուն» մասնաճիւղ, Լա Քրեւենթալի «Շանթ» մասնաճիւղ, Լոս Անձելլոսի մասնաճիւղ, Փասատինայի «Ալատամարտ» մասնաճիւղ, Սան Ֆրանսիսքոյի մասնաճիւղ, Սանթա Գլարայի «Անի» մասնաճիւղ, Կլէնտէլլի «Արարատ» մասնաճիւղ, Ինլընտ Էմփայրի «Արապ» մասնաճիւղ, Վէյիի «Մասիս» մասնաճիւղ, Վաչէ Սողոմոնեան, Վիզէն Աբէլեան, Յարութ Մատէնյեան, Էնտի Անտոնեան, Վահագ Թովմասեան, Սաութ Պէյի «Արագած» մասնաճիւղ, Ճօ Սամուէլեան, Վարդգէս Ալա-

հայտոյեան, Վարդգէս Արապեան, Գէորգ Ալթունեան, Գօգօ Պալեան, Արօ Սաղտրճեան, Վահէ Թաշճեան, Դաւիթ եւ Տաճատ Երէցեաններ, Մի ոմն, Հ.Յ.Դ. «Արմէն Գարօ» կոմիտէ, Վիզէն Դաւիթեան, Սագօ Կարապետեան, Խաչիկ Հաւաթեան, Կարպիս Հինտոյեան, Արմանտ Քիլիճեան, Էմիլ Մաղաքեան, Վահէ Մանուշակեան, Գօգօ Մկրեան, Վարուժ Միրպալեան, Մոնթեպելլոյի մասնաճիւղ, Ուոլնաթ Քրիքի «Կարս» մասնաճիւղ, Կարպիս Էօլմէսէքեան, Սագօ Թաթիկեան, Վիզէն Եփրեմեան եւ Յարութ Մարաշլեան:

●ԱՐԵՒԵԼԵԱՆ ՄԻԱՅԵԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐԷՆ Վահրամ Դանիէլեան, Ռոստոմ ձեմախիրճեան, Չարեհ Յարութիւնեան, Չարեհ Գարակիլլիէան, Ժագ Քէշիշեան, Բաֆֆի Տօնապետեան, Մարսել Գարեան, Վարդգէս Թոքաթլեան, Յակոբ Թոքաթլեան, Վալդգէն Լախոյեան, Պետօ եւ Սիրան Տէր Պետրոսեաններ, Պետիկ Տէր Վարդանեան, Արա Պարսումեան, Կարպիս Պարսումեան, Ռազմիկ Փանոսեան, Թորոս Ռապիկեան, Պոսթրնի մասնաճիւղ եւ Կէրի Յովակիմեան:

- ԳԱՆԱՏԱՅԷՆ Կարապետ Ն. Թովճեան:
- ՅՈՐԴԱՆԱՆԷՆ ձորձ Տաթեան:

ՀՈՐԻՋՈՆԱԿԱՆ

1. Գերմանիոյ ֆուլթպոլի արտյեանութիւնը:
2. Որովայն - Հայաստանի քաղաքներէն - Շաղկապ:
3. Աչքի ծիածան - Յուցական դերանուն:
4. Էական բայ - Լիվրբոլի չէիս ֆուլթպոլիստը՝ Պարոշ:
5. Կոճիկ - Դրկից գիրեր - Յուցական ածական:
6. Շէյքսպիրի հերոսուհիներէն:
7. Մարտկոց - Իսլամ կրօնաւոր:
8. Նախաօր կողակիցը - Շրջակայ:
9. Իգական անուն - Ստացական ածական - լեցուն:
10. Աղամանդ - Թունաւոր օձ - Իգական օտար անուն:
11. Փինկ-փոնկի Լիբանանի աղջկանց Հ.Մ.Ը.Մ.ական արտյեանուհին - Գրաբար՝ «0» - Արտայայտումի կերպ:
12. Աղեկատ - Զայնակից տառեր - Ամերիկացի նախկին կոփամարտիկ՝ Մայք:
13. Երկտող - Հ.Մ.Ը.Մ.ի Մոնթրէլի մասնաճիւղը:
14. Զրոտելու սկսիլ - Հանքային համեմ - Մեծ քաղաք:
15. Հայաստանի մայրաքաղաքներէն - Պրագիցի նախկին ֆուլթպոլիստ:
16. Յոգնակերտ մասնիկ - Խաղաթուղթի մէկնոց - Մշակուած հող:
17. Ափրիկեան երկիր - Հագորենի:
18. Յետոյ - Գերան - Մածիտ, փակցնող նիւթ:
19. Այժմու - Երգնկայի տարբեր անուանումը - Նմանաձայն գիրեր:
20. Կրկնուած քաղաձայններ - Կակուղ - Խրճիթ:

ՈՒՂՂԱՀԱՅԵԱՑ

1. Դիւրագին - Անծին - Հեծանոց:
2. Սանձ - Ալիւրի որդ - Գեղանկարիչ Շարլ Աղամեանի բուն անունը:
3. Զնջել - Վատատոհմիկ - Տապալի:
4. Իտալացի աշխարհահռչակ մրցավար:
5. Պարտէզի տաղաւար - Ծովագոյն (հակ.) - Խաղողի եփած քաղցու:
6. Սեւ ազուաւ - Հիւրասիրութեան ըմպելի (հակ.) - Ես - Հաստատական պատասխան:
7. Յրանսական Օքսէր խումբին մարզիչին մականունը եւ անունը:
8. Յուցական ածական - Կտորած անդամը կապել:
9. Իրերայաջորդ տառեր - Յոյն փրկսոփայ - Տարածքի միաւոր:
10. Ալբուրբենէն - Տարի - Պատարագի բաժակ:
11. Թայլանտի նախկին անուանումը - «Յորմիւլա 1»ի ֆինլանտացի անուանի մրցավար որդ - Որովհետեւ:
12. Գահաւորակ - Երեսի մազ - Յուցական ածական - Յակոբի խաբուած եղբայրը:
13. Լծորդութիւն - Վիճելի խնդիր - Լաւորեար:
14. Վայրի սալոր - Հազար անգամ հազար - Իգական անուն:
15. Իշուկ - Վայրի խոզ - Կզակ - Տուուն:

	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15
1															
2															
3															
4															
5															
6															
7															
8															
9															
10															
11															
12															
13															
14															
15															
16															
17															
18															
19															
20															

ԹԻՒ 149 ԽԱՉՔԱՌԻՆ ԼՈՒԾՈՒՄԸ

	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15
1															
2															
3															
4															
5															
6															
7															
8															
9															
10															
11															
12															
13															
14															
15															
16															
17															
18															
19															
20															

**ԼՍԹՐԱԿՆ - Հ.Ա.Ը.Ա.Ի ԵՐՐԱԿՍԱԿՆԸ ԲՈՒՄԻ ՄԱՍՆԱԾԻԿԴԻ
ՏՄՐԵԿԱՆ ԲԱՆԱԿԱՌԿՄԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐ**

